



ՀՀ ԳԱԱ Թորոս Թորամանյանի անվան մրցանակը՝ հայ ճարտարապետությանը նվիրված լավագույն աշխատությունների հեղինակներին

Կենտրոնի» հիմնադիր-ղեկավար, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, պրոֆեսոր Ադրիանո Ալպագո Նովելլոն, ով հիմնադրել էր «Հայ ճարտարապետության վավերագրեր» մատենաշարը, հեղինակել «Հաղպատ», «Սանահին», «Ամբերդ», «Երեւոյք», «Կեչառիս», «Ամաղու Նորավանք» պրակները, մեծապես նպաստել հայ արվեստի միջազգային գիտաժողովների կազմակերպմանը:

1990-ականներին ՀՀ ԳԱԱ կանոնադրությունից անհիմն հանվեցին գիտական աշխարհում բավական մեծ հեղինակություն ունեցող Թորոս Թորամանյանի և հայագիտության բնագավառում Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակները: Եվ միայն ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջարկությամբ և ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի աջակցությամբ ՀՀ ԳԱԱ նախագահությունը 2010-ին վերականգնեց Թ.Թորամանյանի անվան մրցանակը:

2010թ. մրցույթին Հայաստանի գիտական կազմակերպությունների կողմից առաջադրվեցին ճարտարապետության դոկտորներ Սուրադ Հասարայանը և Գառնիկ Շախկյանը, որոնք էլ միաձայն արժանացան Թ.Թորամանյանի մրցանակին:

Ս.թ. հունիսի 15-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում նրանց հանձնվեցին հուշամեդալներ և վկայագրեր: Բացման խոսքում ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը կարևորեց Թ.Թորամանյանի անվան մրցանակի վերականգնման անհրաժեշտությունը հայագիտության այս բնագավառի հետազոտության համար: Ներկայացնելով Թ.Թորամանյանի անվան մրցանակի չորս տասնամյակի արդյունքները՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արաթ Աղասյանը բնութագրեց անցյալում Թ.Թորամանյանի անվան մրցանակի դափնեկիրներին, նշեց նրանց մեծ ա-

վանդը հայ ճարտարապետության ուսումնասիրման և նվաճումների պրոպագանդման գործում, հիմնավորեց մրցանակի վերականգնման փաստի կարևորությունը:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Վիգեն Ղազարյանը համառոտ ներկայացրեց դափնեկիրներին, նրանց աշխատանքային ուղին, գիտական և հասարակական բազմակողմանի գործունեությունը:

Ռուսական արվեստի թանգարանի տնօրեն, ճարտարապետության թեկնածու Անուշ Տեր-Սիմասյանը խոսեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի վարիչ, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ վաստակավոր ճարտարապետ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր Սուրադ Հասարայանի անցած գիտական բեղմնավոր ուղու մասին, նշեց նրա ավանդը հայ ճարտարապետության պատմության ուսումնասիրության գործում: Ս.Հասարայանն առաջինն է ուսումնասիրել ու

գիտական շրջանառության մեջ դրել վաղմիջնադարյան Հայաստանի մի շարք կարևոր հուշարձաններ, Արցախի, Սյունիքի ճարտարապետության համալիրները, Թբիլիսիի հայկական եկեղեցիները, հետազոտել հայ և մերձակա ու հեռավոր երկրների ճարտարապետական առնչությունները, առաջինն է շարադրել հայ ճարտարապետության պատմությունը սկզբնավորումից մինչև մեր օրերը: Թ.Թորամանյանի անվան մրցանակը նրան շնորհվեց «Հայկական վաղբրիտոնական ճարտարապետությունը» (Մոսկվա, 2010) աշխատության համար, որում Ս.Հասարայանը ներկայացնում է հայկական ազգային շինարարական արվեստի ծավալումը 4-7-րդ դդ., դրա նվաճումները և ավանդը համաբրիտոնական եկեղեցական ճարտարապետության մեջ:

Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագիր Հովհաննես Այվազյանը ներկայացրեց ճարտարապետության դոկտոր, ԵՃՊՀ պրոֆեսոր Գառնիկ Շախկյանի վաստակը հայ ճարտարապետության պատմության հետազոտման գործում: Նշվեցին նրա հիմնարար աշխատությունները՝ նվիրված Լոռի-Գուգարքի ճարտարապետական դպրոցին, գմբեթավոր բազիլիկ տիպի հանգուցային հուշարձան Օծուկի տաճարին, 8-9-րդ դդ. Հայաստանի ճարտարապետությանը, Գ.Շախկյանի «Ոգի, գույն, կերպար» (Երևան, 2009) գրքի արժանիքները, որի համար նա ստացավ Թորոս Թորամանյանի անվան մրցանակը:

Ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը, շնորհավորելով մրցանակակիրներին, ՀՀ ԳԱԱ նախագահությանն առաջարկեց վերականգնել նաև հայագիտության բնագավառում ՀՀ ԳԱԱ Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակը, իսկ Թ.Թորամանյանի անվան մրցանակը հաջորդ անգամ հանձնել ոչ թե Երևանում, այլ Անիում:

ԱճՃԱ ԱՍԱՏՐՅԱՆ



Միջազգային գիտաժողով

Սույն քվականի հուլիսի 11-ին ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում մեկնարկեց «Դիմամիկ համակարգերը, ոչ գծային անալիզը և նրանց կիրառությունը» միջազգային գիտաժողովը: Գիտաժողովն իր աշխատանքները շարունակեց Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում, իսկ 14-15-ին Ստեփանակերտում՝ Արցախի պետական համալսարանում:

ԱՄՆ-ից, Կանադայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից, Չեռնոգորիայից, Բելառուսից, Իրանից ժամանած մասնագետները հայ գիտնականների հետ միասին քննարկեցին դիմամիկ համակարգերի ժամանակակից տեսության ակտուալ խնդիրները:

Գիտաժողովի կազմակերպիչներն էին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի մաթեմատիկայի ինստիտուտը, ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի կենտրոնական տնտեսամաթեմատիկական ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը, Արցախի պետական համալսարանը:

Գիտաժողովը հիմնականում «Գիտություն և առանց սահմանների» կարգախոսի վառ դրսևորում էր: Ի դեպ, Արցախի պետական համալսարանում նիստերի ընթացքը օնլայն համակարգով տեղադրված էր ԳԱԱ ինտերնետ կայքում:

Կոնֆերանսի մասնակիցների ընդունումը, հյուրընկալությունը, կազմակերպման ծախսերը, այցելությունները Արցախի պատմական հուշարձաններ և գրքի հրատարակությունը իրականացվել է արցախյան բարերարի միջոցներով: Նրա իսկ ցանկությամբ մոսկվաբնակ մեր հայրենակցի անունը չի հրապարակվում:

Ակադեմիական մոր հրապարակություններ

1. Ա. Ասատրյան – Տիգրան Չուխանյանի երաժշտական թատրոնը:

2. Վարդուտ գավառի բառ ու բանը (կազմող՝ Կ. Ղահրամանյան):

3. Վ. Սվազլյան – Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ (2-րդ համալրված հրատարակություն):

4. V. Svazlian – The Armenian Genocide: testimonies of the eyewitness survivors.

5. Լ. Սանթրյան – Ժխտման արտահայտությունը հայերենում:

6. Յեղ. Կոլեկտիվ – Վարդգես Սուրենյան – 150 (Հոբելյանական գիտաժողովի զեկուցումների ժողովածու):

7. «Հայ թատերական գործիչները ար-

վեստի մասին» (անթոլոգիա), գիրք 2, 3, կազմող՝ Յա. Խաչիկյան:

8. Յեղ. Կոլեկտիվ – Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական հիմնադրոգ նստաշրջանի նյութեր:

9. Օ. Խաչատրյան – Մովսես Խորենացու «Հայոց պատմության» բառապաշարի քննություն:

10. Ռ. Ծատուրյան – Հայոց ավանդական տոնական ուրեստը:

11. Դ. Հարությունյան, Ա. Բաղալյան – Հակաճգնաժամային միջոցառումները և մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների փոփոխության միտումները:

12. Յեղ. Կոլեկտիվ – «Մոմիկ – 750» զեկուցումների ժողովածու:



ծննդյան 90-ամյակը:

Յա. Ի. Խաչիկյանը Հայրենական մեծ պատերազմի մասնակից է, 1980-1985թթ. ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն սովետի և 3 անգամ (1975-1977, 1985-1987, 1987-1989թթ.) Երևանի քաղաքային պատգամավոր:

Յա. Ի. Խաչիկյանը ծնվել է 1921թ. հունիսի 17-ին Ստեփանավանում, իսկ 1928թ.-ից Երևանի բնակիչ է: Այստեղ է նա ավարտել միջնակարգ դպրոցը, ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետը, ասպիրանտուրան՝ դառնալով գեղագիտության գծով փիլիսոփայական գիտությունների առաջին թեկնածու, իսկ հետագայում էլ նույն բնագավառի գիտությունների առաջին դոկտորը: Նա 30 մեծագործությունների և գրքերի հեղինակ է, 17 թեմատիկ ժողովածուների կազմող և խմբագիր: Նրա գրչին են պատկանում գեղագիտության, փիլիսոփայության, արվեստի, մանկավարժու-

նը հայ գեղագիտական մտքի պատմության ուսումնասիրությունների գործում, որը, շնորհիվ նրա ջանքերի, ծեղք բերեց քաղաքագիտության իրավունքներ և վերաճեց հայագիտության նոր, ինքնուրույն ճյուղի: Նրա հրապարակած 15 գիրք, 8 ժողովածու և բազմաթիվ հոդվածներ նվիրված են հենց հայ գեղագիտական մտքի պատմությանը:

Խաչիկյանի նախաձեռնությամբ Հայաստանի միջնակարգ դպրոցներում /առաջինը նախկին ՍՍՀՄ-ում/ մտցվեց էսթետիկայի և էթիկայի հիմունքների դասընթացը: Նա գեղագիտության տեսության և պատմության ճանաչված մասնագետ է ՍՍՀՄ-ում և արտերկրում, ակտիվ մասնակից բազմաթիվ միջազգային, միութենական, տարածաշրջանային և համառազմական գիտաժողովների: Նրա գործերը տպագրվել են հայերեն, ռուսերեն, ինչպես նաև գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն

փարսիստական հոսանքների պրոբլեմներին), ՍՍՀՄ փիլիսոփայական ընկերության, Համամիութենական ստեղծագործական միությունների (կինոյի և նկարչների) վարչությունների և այլնի անդամ:

Յակով Խաչիկյանը 1953-1971թթ. ՀԽՍՀ ԳԱ և այլ գիտական հիմնարկությունների ասպիրանտներին և հայցորդներին դասավանդել է փիլիսոփայություն առարկան այդ աշխատանքի համար արժանանալով ակադեմիկոս Վ. Համբարձումյանի պատվոգրին, գիտական կարգերի պատրաստման համար: Նրա ունկնդիրներից են գիտության հարյուրավոր թեկնածուներ, դոկտորներ, ԳԱ ակադեմիկոսներ և թղթակից անդամներ:

Վերջին տարիներին նա ստեղծել է «Հայ արվեստի գործիչները արվեստի մասին» անթոլոգիան, որը կազմված է 7 գրքից: Այսօր էլ, չնայած իր տարիքին, Խաչիկյանը կատարում է բեղմնավոր գիտահետազոտական աշխատանք:

Յա. Ի. Խաչիկյանը եղել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի փոխնախագահ և տնօրեն, Հայաստանի ԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ, Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտի ղեկավար, կատարել է լայն հասարակական գործունեություն ստեղծագործական միություններում, Երևանի արվեստի օջախներում և այլն:

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ

ՅԱԿՈՎ ԻՎԱՆԻ ԽԱՉԻԿՅԱՆԸ 90 ՏԱՐԵԿԱՆ Է

Սույն թվի հունիսի 17-ին լրացավ ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հիմնադրի և աշխատակցի՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, գեղագիտության պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, Մանկավարժության և սոցիալական գիտությունների ակադեմիայի (ՌԴ) ակադեմիկոս Յակով Իվանի Խաչիկյանի

յան, հրապարակախոսության և այլ հարցերի նվիրված մոտ 300 հոդված, որոնք տպագրվել են գիտական ամսագրերում և ժողովածուներում, ինչպես նաև մամուլում: Իր գործունեությամբ Յակով Խաչիկյանը նպաստել է Հայաստանում գեղագիտության տեսական հարցերի լայն մշակմանը և լուսաբանմանը: Հատկապես բարձր գնահատականի է արժանի նրա ծառայություն-

և լեհերեն՝ Հայաստանում, Մոսկվայում, Թբիլիսիում, Բաքվում, Սոֆիայում, Բեռլինում, Հաագայում, Փարիզում, Վարշավայում: Նրա ստեղծագործություններն արժագանք են գտել մեր երկրում և նրա սահմաններից դուրս: Յա. Խաչիկյանը եղել է ՍՍՀՄ ԳԱ Հասարակագիտության սեկցիային կից երկու գիտական խորհուրդների (Էսթետիկայի և արտասահմանյան գաղա-

վերջերս Մոսկվայում տեղի ունեցավ ՄԴՀ կազմավորման 20-ամյակին նվիրված «Երիտասարդ փիլիսոփայի դպրոց» խորագրով գիտաժողովը, որը կազմակերպվել էր Ռուսաստանի Դաշնության Գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության ինստիտուտի նախաձեռնությամբ և ՄԴՀ անդամ պետությունների Հումանիտար համագործակցության միջազգային հիմնադրամի աջակցությամբ:

Դպրոցին իրենց մասնակցությունն էին բերել Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Բելառուսի, Հայաստանի, Տաջիկստանի և Ադրբեջանի պատվիրակությունները, որոնցում ընդգրկվել էին դասախոսներ, հետազոտողներ, ասպիրանտներ և ուսանողներ:

Հայաստանի պատվիրակությունը ներկայացնում էին ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի աշխատակիցներ՝ ինստիտուտի գիտաբարոյաբան, քաղ. գիտ. թեկնածու Է.Յ. Օրդուխանյանը և ավագ գիտաշխատող, քաղ. գիտ. թեկնածու Հ.Հ. Սուքիասյանը՝ որպես դասախոսներ, ինչպես նաև երկու ասպիրանտ և երկու ուսանող:

Դպրոցը մեկնարկեց հունիսի 20-ին մերձմուսկովյան «Կոսկրեսենսկոյե» հանգստյան տանը: Հանդիսավոր նիստում բացման խոսքով հանդես եկավ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ա.Ա. Հուսեյնովը, ով ողջունեց մասնակիցներին՝ մաղթելով նրանց գիտական և բարեկամական մթնոլորտի ձևավորում և բեղմնավոր աշխատանք: Միջոցառումը շարունակվեց ըստ նախատեսված օրակարգի:

Դպրոցին մասնակցում էին ՄԴՀ երկրների անվանի մի շարք գիտնականներ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտորներ

«Երիտասարդ փիլիսոփայի դպրոց»

Վ.Մ. Մեծուկ, Ս.Ա. Նիկոլսկին, Ռ.Գ. Ապրեսյանը, Է. Յու. Սոլովյովը, Վ.Ա. Մալախովը, Ա.Ա. Կարա-Մուրզան և այլք:

Յուրաքանչյուր օր նախատեսված էին երեք դասընթաց և մեկ կլոր սեղան, որոնք ընթանում էին բուռն և հետաքրքիր քննարկումներով, և որոնց ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում նաև Հայաստանի պատվիրակությունը: Դպրոցի ամբողջ ընթացքը հազեցած էր հետաքրքիր և արդի խնդիրներին վերաբերող դասախոսություններով, որոնց ընթացքում քննարկվում էին փիլիսոփայությանը, մշակութային և քաղաքականությանը վերաբերող հիմնախնդիրներ:

Դպրոցի շրջանակներում արժարժվում էին հարցեր, որոնք վերաբերում էին փիլիսոփայական տարբեր հիմնախնդիրների, ինչպիսիք են՝ բարոյագիտությունը, քաղաքականությունը և բարոյականությունը, մշակույթը, ազգային ինքնության հարցերը, Արիստոտելի և Կանտի փիլիսոփայական հայացքները և այլն:

Հայաստանի ներկայացուցիչները հանդես եկան հետևյալ զեկուցումներով՝ Է.Յ. Օրդուխանյան «Քաղաքական խոսույթը որպես քաղաքական հաղորդակցության միջոց», Հ.Հ. Սուքիասյան,

«Տեղեկատվական հասարակություն. սոցիալ-քաղաքական ասպեկտներ»:

Հարկ է նշել, որ բոլոր դասախոսությունները և քննարկումներն արժեքավոր գիտելիքներ էին հաղորդում լսարանին, ինչն էլ տվյալ դպրոցի հիմնական առաքելությունն էր: Ուսանողների կողմից բարձրագույն հարցերին մշտապես տրվում էին մանրակրկիտ և սպառիչ պատասխաններ: Երբեմն քննարկումների ժամանակ մթնոլորտը փոքր-ինչ շիկանում էր վերածելով քննարկումները լուրջ գիտական բանավեճերի, որոնց համակ ուշադրությամբ հետևում էին ուսանողները:

Բացի տիրող գիտագործնական մթնոլորտից, դպրոցի ընթացքում ձևավորվում էին նաև ընկերական հարաբերություններ մասնակից պետությունների ներկայացուցիչների միջև: Ամեն երեկո՝ դասընթացներից հետո, դպրոցի մասնակիցները ներկայացնում էին իրենց երկիրը, այնտեղ առկա փիլիսոփայության արդի վիճակը և դրա զարգացման ակնկալվող հեռանկարները:

Ուշագրավ է նաև այն, որ դպրոցի մասնակիցները փիլիսոփայության վերաբերյալ հարցերը քննարկում էին նաև դասընթացներից հետո, ինչը վկա-

յում էր մասնակիցների փիլիսոփայության հանդեպ առաջացած հետաքրքրասիրության և արդեն իսկ ձևավորված գիտական և բարեկամական մթնոլորտի մասին:

Միջոցառման ավարտին բոլոր ուսանողներին տրվեցին համապատասխան վկայագրեր՝ «Երիտասարդ փիլիսոփայի դպրոցին» մասնակցելու համար, ինչը մեծ ոգևորություն առաջացրեց մասնակիցների շրջանում, իսկ դպրոցի կազմկազմի միջև, որ առաջիկայում լույս է տեսնելու ժողովածու, որտեղ տպագրվելու են բոլոր դասախոսությունները:

Միջոցառման վերջին օրը երեկոյան, կազմակերպվեց մշակութային երեկույթ, որտեղ բոլոր երկրների ներկայացուցիչները հանդես եկան ազգային երգով, պարերով և գրական ստեղծագործություններով, ինչն ավելի լայն հնարավորություն ընձեռեց՝ տեղեկանալու և հաղորդակից լինելու միմյանց մշակութային արժեքներին: Այս հարցում անմասն չմնաց նաև մեր պատվիրակությունը՝ ներկայացնելով հայ ազգային երգը, պարը և արձակը:

Հարկ է նկատել, որ դպրոցի մասնակիցների միջև ձևավորվեցին շերտ բարեկամական կապեր, որոնք կարող են խոստումնալից հիմք դառնալ առաջիկայում նման դպրոցների կազմակերպման և անցկացման համար ՄԴՀ պետություններից որևէ մեկում, ինչն էլ կարող է կրել շարունակական բնույթ: Նմանատիպ նախաձեռնությունները կարող են միանշանակ վերականգնել նախկին ՀԽՍՀ պետությունների միջև ավանդական բարեկամական կապերը:

Է. ՕՐԴՈՒՒՆՅԱՆ

Նամականիշ՝ նվիրված միաբանության 200-ամյակին

Վիեննայում Մխիթարյան միաբանության հաստատման 200-ամյա (1811-2011) հոբելյանի առթիվ ավստրիական փոստային բաժանմունքն ինքնատիպ նամականիշ է թողարկել, որի շնորհանդեսը տեղի է ունեցել մայիսի 12-ին Մխիթարյան վանքի վերանորոգված ճաշասրահում, տեղեկացնում է Կանադայում լույս տեսնող «Ապագայ» շաբաթաթերթի հունիսի 6-ի համարը:

Հորեյլանական տոնակատարությունների շարքի բացումն ավետող այդ հանդիսությանը ներկա են եղել Ավստրիայի պապական նվիրակ Փեթեր արք. Յուրբերգը, Կենտրոնական Եվրոպայի և Շվեդիայի հայրապետական պատվիրակ Հայկազուն Ժ. վրդ. Նամարյանը, Վիեննայում ՀՀ լիազոր դեսպան Աշոտ Հովակիմյանը, վիեննական փոստի տնօրեն Վոլֆգանգ Լեյխաբը, հայ առաքելական կաթողիկե համայնքների և միությունների ներկայացուցիչները:

Վիեննայի Մխիթարյան վանքի աբբաղայր Պողոս Գոճմայանն իր բանախոսության ընթացքում անդրադարձել է հատկապես հայագիտության բնագավառում միաբանության կատարած բացառիկ դերին: Այնուհետև վիեննական փոստի տնօրենը ներկայացրել է գեղեցիկ նամականիշը, որի վրա պատկերված է մի շքեղ պախարան Մխիթարյան վանքի գրադարանից:

Ցուցադրվել են նաև Հայաստանի կենտրոնական բանկի և ավստրիական դրամատան կողմից նույն հոբելյանի առթիվ լույս ընծայված արծաթյա հուշադրամներ, ինչպես նաև վանքի ծեղագրերից մեկի նմանատիպը (ֆաբրիմիլեն):

Հորեյլանական գլխավոր հանդիսությունները տեղի են ունենալու Վիեննայի մայր վանքում սեպտեմբերի 10-ին և 11-ին, իսկ պետական մակարդակով երևանում նշվելու է հոկտեմբերին:





ՀՀ ԳԱԱ ԱՐՏԱՄԱՀՄԱՆՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ
ԳԱԱ սփյուռքի բաժինը

Արշակ Տրդատի Մուրադյան

Միացյալ Նահանգների Սննդամթերքի և նյութափոխանակման խորհրդի նախագահ, բժիշկ-պրոֆեսորների ազգային կոմիտեի նախագահ, Շաքարախտի ամերիկյան ասոցիացիայի և ներքին հիվանդությունների ընկերության անդամ, Ֆլորիդայի համալսարանի բժշկագիտության ֆակուլտետի ղեկան, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, պրոֆեսոր Արշակ Տրդատի Մուրադյանը, 1976թ. ավարտելով Բեյրութի ամերիկյան համալսարանը, ստացավ մանդաթաբուլյուն և քիմիա մասնագիտության բակալավրի աստիճան, իսկ 1980թ. մագիստրոսի։ Ռեսուսնացության տարիներին նա ընտրվել է Ալֆա Օմեգա Ալֆա բժշկական միության պատվավոր անդամ, իսկ հետագայում ավագ բժշկական դպրոցում դարձել այդ միության տեղային մասնաճյուղի նախագահը։ Ավարտելով Բեյրութի ամերիկյան համալսարանի օրդինատուրան, նա երեք տարի աշխատել է Սինեթոքի համալսարանի էնդոկրինոլոգիայի բաժանմունքում, որտեղ էլ ընտրվել է Ֆի Կապպա Ֆի միության անդամ։ Արշակ Մուրադյանն ամերիկյան վիրաբույժների, էնդոկրինոլոգների, շաքարախտի և մետաբոլիզմի խորհրդի կողմից ատեստավորված վիրաբույժ է։

1985թ. Մուրադյանը Լոս Անջելեսի Կալիֆոռնիական համալսարանում վարում էր բժշկության պրոֆեսորի ասիստենտի պաշտոնը: 1988-ին նա տեղափոխվում է Արիզոնայի համալսարան՝ որպես բժշկության պրոֆեսոր հետազայում նշանակվում ծերացման խնդրի հետազոտությունների բաժանմունքի տնօրեն: Այնուհետև Ա. Մուրադյանը տեղափոխվում է Սենթ Լուիսի համալսարան՝ որպես բժշկության պրոֆեսոր և էնդոկրինոլոգիայի, շաքարախտի և մետաբոլիզմի բաժանմունքի տնօրեն: Նա շուրջ 15 տարի եղել է էնդոկրինոլոգիայի բնագավառում կրթաբոշակների ծրագրի տնօրեն: Նրա հմուտ և եռանդուն աշխատանքի շնորհիվ բաժանմունքը որակապես աճել է և 1999թ. US News-ի և World Report-ի կողմից ճանաչվել ԱՄՆ-ի 14-րդ լավագույն բաժանմունքը: Արշակ Տրդատի Մուրադյանը 2002թ. դեկտեմբերին ընտրվում է ներքին օրգանների բժշկության Սենթ Լուիսի միության նախագահը: Նա Սենտ Լուիսի համալսարանում անդամակցել է մի քանի հիմնական կոմիտեների, ինչպիսիք են՝ համալսարանի բժշկական խմբի ղեկավարող մարմինը (2000-2002թթ. նա ղեկավարել է այդ կոմիտեն), համալսարանի բժշկական խմբի կառավարչությունը և կլինիկական գործերի կոմիտեի վստահված անձանց կառավարչությունը:



մի խորհրդի ղեկավար, նաև մեծահասակների շաքարախտի փորձագետների խմբի ղեկավարը: Նա եղել է Կլինի-
Ֆելտերի սինդրոմի ամե-
րիկյան ընկերության գի-
տական ղեկավարող
խմբի անդամ, իսկ Մեր-
կալումս Therapeutics,
Drugs, Drugs and Aging
and Academic Internal
Medicine ամերիկյան
ամսագրի խմբագրական
կոլեգիայի անդամ է,
նաև խորհրդատու է մի
շարք միջազգային դե-
ղագործական ընկերու-
թյունների:

Արշակ Տրդատի Մուրադյանը բազմաթիվ մենագրությունների և ավելի քան 400 հրապարակումների հեղինակ է. դասախոսություններ է կարդացել հայրյուրավոր քաղաքներում՝ ամբողջ երկրագնդով մեկ: Նա հրավիրված պրոֆեսոր է եղել մի շարք հաստատություններում և երկու տարի դասախոսել է Մուն Յաթ Սեն համալսարանում (Չինաստանի ժողովրդական Հանրապետություն):

Գոհ իր նախկին ձեռքբերումներից՝ Արշակ Տրդատի Մուրադյանը և նրա ընտանիքը շատ բարձր գնահատեցին և հպարտ են, որ 2008-ին Մուրադյանը ընտրվեց ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ:

Ամենօրյա պարտականություններից և գիտական հետազոտություններից ազատ ժամանակը Արշակ Սուրադյանը սիրում է անցկացնել իր ընտանիքի հետ: Ջեկսոնվիլի իրենց առանձնատանը: Նա ունի երեք զավակ: 24-ամյա ավագ որդին տաղանդավոր կլառնետիստ է և Սենթ Լուիսում ուսանում է քիմիա: 20-ամյա դուստրը՝ Արիանան, այս տարի ավարտում է Բոստոնի համալսարանը, իսկ ամենափոքրը՝ 15-ամյա Դիանան, սովորում է դպրոցում և

2006թ. մայիսից Ա. Մուրադ-
յանը Ֆլորիդայի համալսարա-
նի բժշկության ամբիոնի վա-
րիչն էր և միաժամանակ UF &
Shands հիվանդանոցում ղեկա-
վարել է բժշկական ծառայու-
թյունները:

Արշակ Մուրադյանի հետազոտական հետաքրքրությունները հիմնականում կենտրոնացված են շաքարախտի և լիպիդ հիվանդությունների ոլորտին, մասնավորապես A-1 ապոլիպոպրոտեինի դրսևորմանը: Նա էնդոկրինոլոգիայի միության և շաքարախտի ամենօրյան առողջագիտի անդամ է և որպես սննդի և մետաբոլիզմի մեծահասակների շաքարախտի ղեկավարը: Նա եղել է Կլին-



Ժակցությունից մի օրինակ է հիշում Արշակ Մուրադյանը:

«2003թ. նոյեմբերին այդ լաբորատորիայի աշխատակից Մերի Յովսեփյանը ԳԱՏԱՀ-ի տրամադրած դրամաշնորհի ֆինանսական միջոցների հաշվին հնարավորություն ստացավ ելքեք ամսով այցելելու Մենք Լուիսի համալսարան (Միսսուրի, ԱՄՆ) և աշխատել իմ

լաբորատորիայում: Այդ ընթացքում Հայաստանից բերված շաքարախտով հիվանդների արյան նմուշներում որոշվեցին նեյրոններին յուրահատուկ էնոլազայի և S100 սպիտակուցի մակարդակները՝ որպես ուղեղ-արյունային պատնեշի ամբողջականության խախտման ցուցանիշներ: Մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ շաքարախտի զարգացման ուշ փուլերում հիվանդների ուղեղ-արյունային պատնեշի թափանցելիությունը փոխվում է դրանից բխող բոլոր հետևանքներով:

Այդ համագործակցության արդյունքներն արտացոլվեցին երկու համատեղ աշխատանքներում, որոնք լույս տեսան հեղինակավոր միջազգային ամսագրերում (*Diabetes and Neuroscience letters*)»:

Սեզ մնում է ցանկանալ, որ նման համագործակցությունն արտասահմանի և հայրենիքի հայ գիտնականների միջև ավելի սերտանա՝ հօգուտ հայրենական գիտության զարգացման:

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

«Պատմաբանասիրական
հանդես»-ի անդրանիկ համարը

Խոստովանենք, որ «Պատմաբանասիրական հանդես»-ի 2011 թվականի 1-ին համարը հարուստ է, ծանրակշիռ, բազմաբովանդակ և, որ կարևոր է, կարդացվում է մեծ հետաքրքրությամբ: Այս փոքրիկ ամօնախմբում մենք կփորձենք ընթերցողի ուշադրությունը բռնել մի շարք հրապարակումների վրա, որոնք գիտական, ճանաչողական մեծ արժեք ունեն և անպայման օգտակար են թե՛ ոլորտի մասնագետների և թե՛ հայագիտությանը և պատմությանը հետաքրքրվողների համար:

«Նիկոլայ Ադոնցը թողել է գիտական այնպիսի ժառանգություն, որը մշտապես մնալու է հայ պատմագիտության, հայագիտության զանձարանում, որպես «առաջին մերոյ զանձուն համարելով»:

Բանասիրության դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալեկտա Դոլոխանյանն այսպես է սկսում մեծանուն պատմաբան, բյուզանդագետ և հայագետ Նիկողայոս Ադոնցի ծննդյան 140-ամյակին նվիրված հրապարակումը, որը ըստ արժանվույն և մանավանդ մեծ սիրով ներկայացնում է Ա-

դոնց գիտնականին, երևելի հայագետին ու պատմաբանին և զնահառում նրա տեղն ու դերը հայ պատմագիտության մեջ:

Մեծ հետաքրքրությամբ է կարդացվում Ասատուր Փաշայանի «Վիեննայի Մխիթարյանները՝ գիտության և մշակույթի ջահակիրները» հոդվածը, որը նվիրված է միաբանության հիմնադրման 200-ամյակին:

«Հայ ժողովրդի մտավոր մշակույթի պատմության հոլովությունում նախադեպը չունեցող այդ կառույցի (իմա՝ Մխիթարյան միաբանություն) նպատակը հայոց պետության բացակայության պայմաններում հոգևոր, ուսումնական, կրթական, գիտական, բարձրամական, հրատարակչական և մշակութային գործունեություն ծավալելն էր»,- գրում է Սաստուր/ Փաշայանը և մեկիկ-մեկիկ մեկնում Մխիթարյանների գործունեությունը հիշյալ ոլորտներում:

Սուսաննա Դովհաննիսյանի «Էջեր Թու-
մանյանի հրապարակախոսական գործու-
նությունից» հոդվածը մեզ է ներկայաց-
նում համճարեղ բանաստեղծի նկարագ-

րի և գործունեության համեմատաբար քիչ ծանոթ կողմերի մասին՝ բանաստեղծը ընտրապայքարի և բանակոլիվների կիզակետում: Տեղեկություններն ուշագրավ են և անպայման պետք է ընթերցել:

«Թորոս Ռոսլինի կյանքն ու արվեստը»
իրապարակման հեղինակ Իրինա Դրամբ-
յանը գրում է. «Թերևս, առաջին հայ գե-
ղանկարիչը, որի ստեղծագործական դեմ-
քը բավականաչափ հստակ բյուրեղացել է
պրոֆեսիոնալ բարձր արվեստի շրջանակ-
ներում և թվում է ավելի քիչ անանձնա-
կան, եղել է Թորոս Ռոսլինը, մեր ամենա-
փառաբանված մանրանկարիչը, որն ապ-
րել է XIII դարի Կիլիկիայում»:

- Այսօր մեզ համար ինչո՞վ է արժեքավոր Թորոս Ռուսիին արվեստը, որն ապրել է մեզանից ութ հարյուր տարի առաջ. հարցնում է Իրինա Դրամբյանը, և ինքն էլ պատասխանում:

- Ամենից առաջ նրանով, որ նա եղել է մեծ գեղանկարիչ, գեղանկարիչ բոլոր ժամանակների համար, որի արվեստում օրգանապես զուգորդվում է երկու որակ, որ անհրաժեշտ են ուզած մեծ արվեստի համար՝ բովանդակության հզորությունը և գեղարվեստական ձևի կատարելությունը:

Բնականաբար, մենք միտում չունենք սույն անոնսի մեջ ներկայացնելու հանդեպի բոլոր հրապարակումները, որոնք, ինչ-

պես սկզբում նշեցինք, չափազանց հետաքրքիր են, բազմազան և պարունակում են վիթխարի տեղեկատվություն:

Կարծում ենք ընթերցողին անպայման կիստաքաբերեն հանդեսի այնպիսի հրապարակումները, ինչպիսիք են՝ Արմեն Վիրաբյանի «XVII դ. երևանի խաների գործունեությունը Ձաքարիա Սարկավազ Քանաքեռցու «Պատմագրության» մեջ, Մարիամ Մարգարյանի, Մարի Ձաքարյանի «Հավատը մարդասիրության ակունք» ըստ Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան», Ռուբեն Վարդանյանի «Արքայից արքա» տիտղոսի համար պայքարը Դոմի մ.թ.ա. I դարի արևելյան քաղաքականության համատեքստում», Ժորես Խաչատրյանի «Հին Հայաստանի սյունաքարդ ղախիճների հարցի շուրջ» և այլն:

Ինչպես միշտ, հանդեսը տպագրել է գրախոսություններ արժեքավոր հրատա-րակությունների մասին, նշենք 33 ՊԱԱ նա-խագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոս-յանի, ակադեմիկոս Գևորգ Բրուտյանի, 33 ՊԱԱ թղթակից անդամներ Բաբկեն Դա-րությունյանի, Աշոտ Սելվոնյանի հոբեյան-ները:

Հիրավի, խմբագրությունն ընթերցողի սեղանին է դրել հանդեսի հարուստ և բովանդակալից նոր համարը, որն արժե և պետք է անպայման ընթերցել:

SPIE-ի և OSA-ի Հայաստանում գործող մասնաճյուղերը

Աշխարհում կան բազմաթիվ միջազգային կազմակերպություններ, որոնց նպատակը գիտության այս կամ այն ճյուղի զարգացումն ու տարածումն է: Այդպիսի կազմակերպություններից են OSA-ն, /Optical Society of America/ Օպտիկայի ամերիկյան հանրությունը/ և SPIE-ն /International Society of Optics and Photonics / Օպտիկայի և ֆոտոնիկայի միջազգային հանրությունը/: Վերջիններիս առաջնահերթ խնդիրներն են մեծացնել ուսանողների հետաքրքրությունը և ներգրավվածությունը գիտական աշխատանքների մեջ, համախմբել շնորհաշատ, տաղանդավոր ֆիզիկոսներին, մասնավորապես օպտիկայի ոլորտի մասնագետներին: Այս մտահղացումները կենսագործելու համար աշխարհի տարբեր երկրներում հիմնվում են վերը նշված կազմակերպությունների ուսանողական մասնաճյուղեր, որոնց գործունեությունն իրականացնելու համար հատկացվում են ֆինանսական միջոցներ՝ գիտաժողովներ, սեմինար-քննարկումներ և այլ կարգի գիտաուսուցողական միջոցառումներ կազմակերպելու նպատակով:

2004 թ. մի խումբ երիտասարդ ֆիզիկոսների նախաձեռնությամբ (Գևորգ Մուրադյան, Գոռ Նիկողոսյան, Նիկոլայ Բալասանյան) SPIE-ի և OSA-ի մասնաճյուղերը հիմնադրվում են նաև Հայաստանում՝ համապատասխանաբար LS-Պիրկայի և Աշտարակի ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի աջակցությամբ: OSA-ի հայաստանյան մասնաճյուղը ներկայումս գլխավորում է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի ակադեմիկոս Գուրգեն Սահակյանի անվան տեսական ֆիզիկայի ամբիոնի ասպիրանտ Դիանա Անտոնոսյանը, SPIE-ինը՝ ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի օպտիկայի ամբիոնի ասպիրանտ Տիգրան Դադալյանը:

Հիշյալ կառույցների ջանքերով ԵՊՀ-ում պարբերաբար անցկացվում են սեմինարներ ինչպես Հայաստանի, այնպես էլ արտերկրի՝ ԱՄՆ-ի, Անգլիայի, Ռուսաստանի, Բրազիլիայի, Սինգապուրի և այլ երկրների իրենց բնագավառում առաջատար գիտնականների մասնակցությամբ: Այդ սեմինարները, որոնց կարող է մասնակցել ֆիզիկայով հետաքրքրվող յուրաքանչյուր ոք, նվիրվում են գիտության արդիական հետազոտությունների քննարկմանը կամ կազմակերպվում են ըստ ուսանողների գիտական հետաքրքրությունների պահանջարկի: Վերջին նմանատիպ սեմինարը «Քվանտային ինֆորմատիկայի ներածություն» խորագրով, տեղի է ունեցել սլավոնական համալսարանում, սեմինարին մասնակցում էր Ռուսաստանի Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի գիտաշխատող պրոֆեսոր Վ. Գերդտը:

Տարեկան առնվազն մեկ անգամ OSA-ի և SPIE-ի հայաստանյան մասնաճյուղի անդամները մասնակցում են միջազգային գիտաժողովների, որոնցից վերադառնում են գի-

տության նվաճումներին իրազեկ և նոր ծրագրեր իրականացնելու եռանդով լի: Վերջին գիտաժողովները տեղի են ունեցել անցյալ տարվա հուլիսին ԱՄՆ-ի Սան Դիեգո (SPIE) և հոկտեմբերին Ռոչեստեր (OSA) քաղաքներում:

Վերոնշյալ կառույցների հետ սերտորեն համագործակցում է նաև ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի ՌԻԳԸ-ն, կազմակերպվում են ճանաչողական էքսկուրսիաներ և քննարկումներ: OSA-ի և SPIE-ի մասնաճյուղերի հեռ համագործակցության շնորհիվ ՌԻԳԸ-ն լայն հնարավորություն է ստանում մասնակցելու այդ խմբերի կողմից Հայաստանում կազմակերպվող միջազգային գիտաժողովների անցկացմանը: Գործունեության հենց սկզբից կազմակերպվել են բազմաթիվ գիտաժողովներ ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս:

Մասնաճյուղերի գործունեության մասին առավել համաձայնալի տեղեկություններ կան OSA և SPIE-ի հայաստանյան ուսանողական պաշտոնական կայքերում (www.osa.am և www.spie.am): Կայքերում տեղ են գտել նաև ԵՊՀ-ի ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի /ՖՀԻ/, Երևանի Ալիխանյանների անվան ինստիտուտի, Բյուրականի աստղադիտարանի պրոֆեսորադասախոսական կազմերի և դրանց գիտական թեմաների մասին համառոտ տեղեկություններ: OSA-ի մասնաճյուղը սկզբնական շրջանում հինգ անդամ ուներ, այժմ նրանց թիվը հասնում է տասներեքի: SPIE-ի կազմում ընդգրկված է քսաներեք անդամ ԵՊՀ-ից և ՖՀԻ-ից: Մասնաճյուղի դռները բաց են բոլորի առաջ, ովքեր կկամենան անդամագրվել և կհամապատասխանեն պահանջվող չափորոշիչներին՝ անգլերենի պարտադիր իմացություն, ընդհանուր բարձր առաջադիմություն, աշխատելու պատրաստակամություն, հետաքրքրությունների լայն շրջանակ և այլն: Նշված մասնաճյուղերը հաճախ համագործակցում են. երկուսի անդամներն էլ գիտության նվիրյալներ են և ծառայում են գիտության տարածման գործին: Կազմակերպվող միջոցառումներին (տարեկան 10-15 սեմինար) հիմնականում մասնակցում են ուսանողներ միջին հաշվով, 20-30: Ծրագրերից անմասն չեն նաև աշակերտները: Տարեկան շուրջ 50 աշակերտ մասնակցում է ծրագրերին, մոտ 30 %-ն իբրև մասնագիտություն ընտրում է ֆիզիկան: Ընդհանրապես առանձնակի ուշադրություն է

դարձվում դպրոցականներին, նրանց համար կազմակերպվում են էքսկուրսիաներ ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետ, ՖՀԻ, LS-Պիրկայ, Բյուրականի աստղադիտարան և այլն: Դպրոցներում ու բուհերում հետզհետե նվազում է ֆիզիկային հատկացվող ժամաքանակը, դասերն էլ հաճախ ծանծաղի են անցնում, ինչը, հասկանալի է, բացասաբար է անդրադառնում դասանյութի յուրացման վրա: Մասնաճյուղերն իրենց սեմինարներն անցկացնում են միանգամայն ճիշտ մանկավարժական մեթոդներով՝ պատկերավոր և մատչելի, ինչի շնորհիվ հետաքրքրություն է առաջանում ֆիզիկայի նկատմամբ: Սեմինարները չեն սահմանափակվում զեկուցումներով, հաճախ շարունակվում են ոչ ֆորմալ միջավայրում՝ թեյի սեղանի շուրջ ակտիվ քննարկումներով, հետաքրքիր մեկնաբանություններով. արդյունքը լինում է նորանոր գաղափարների ծնունդը:

OSA-ի հայկական մասնաճյուղն ակտիվ և կարևոր ներդրում ունի ամռանը Երևանում տեղի ունենալից միջազգային գիտաժողովին «PMNM» (<http://pmnm2011.ipr.sci.am>) կազմակերպմանը: Այնպես SPIE-ի նախաձեռնությամբ և ԵՊՀ-ի, Աշտարակի ֆիզիկայի ինստիտուտի, և սլավոնական համալսարանի աջակցությամբ տեղի է ունենալու սիմպոզիում «Օպտիկան և իր կիրառությունները» խորագրով (www.ipr.sci.am/optics2011), որը նվիրված է խմբի գործունեության 5-ամյակին: Մասնակցելու են գիտնականներ Անգլիայից, Ռուսաստանից, Իսպանիայից, Հնդկաստանից և այլ երկրներից: Սիմպոզիումի շրջանակներում անց է կացվելու ցուցահանդես, որտեղ ցուցադրվելու են Հայաստանում արտադրված օպտիկական սարքերը: OSA-ի առաջիկա ծրագրերից է օպտիկայի լաբորատորիայի համար կոմպակտ և նոր լազերի ձեռքբերումը:

Կազմակերպությունները ցուցաբերվող օգնության ու քաջալերանքի համար իրենց երախտագիտությունն են հայտնում ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմին ու ղեկավարող աշխատակիցներին:

Հաջողություն և գիտակազմակերպական բեղունություն SPIE-ի և OSA-ի հայաստանյան մասնաճյուղերին:

Հրաչյա ԱՐՄԵՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ դասախոս

ԱՄԵՐԻԿԱՆԷՅ ԲՆԱԳԵՏ ԶՈՆ ՎԱՐԴԱՆԸ

Կամ ԸՎՅ «ՌՈՒԲԻՆԶՈՆԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ» ԱՄՆ-ում

Ամերիկահայ անվանի քիմիագետ, հանքաբան, ճանապարհորդ, բնախուզական անհավանական արկածների սիրահար Հովհաննես Գարայանը (Զոն Գարա Վարդան) ծնվել է XIX դ. կեսերին, մոտավորապես 1849 թ. (որոշ տվյալներով՝ 1906 թ. 57 տարեկան էր), Կ. Պոլսում, ունեւոր գյուղացու ընտանիքում: Տասներկու տարեկանում սովորելու մտադրությամբ ծնողները նրան ուղարկել են Վիեննա, ամենայն հավանականությամբ՝ Մխիթարյան միաբանների մոտ: Այնտեղ երեք տարի ուսանելուց և հատկապես բնական գիտությունների և լեզուների ասպարեզում գիտելիքներ ամբարելուց հետո նա հոր կարողության շնորհիվ մեկնել է Փարիզ, որտեղ սովորել է ևս երկուսից երեք տարի: Սակայն 14 տարեկանում պատանի Հովհաննեսը, ընտանիքի նյութական միջոցների սղության պատճառով, մեկնում է Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ ապրուստ հայթաթելու նպատակով:

Նա Նոր երկիր է ժամանել բամբակագործական Նոր Օռլեանի նավահանգստով, ապա անցել է Միացյալ Նահանգների արևմտյան ափ, որտեղ ապրել է չորս և ավելի տասնամյակ:

Ընդհուպ մինչև 1890 թ. նա քիմիագետի իր հմտությունները կիրառել է Յուտայի, Նևադայի, Կալիֆոռնիայի և Կոլորադոյի նահանգներում ոսկու, արծաթի, ալյումինի, պղնձի և երկաթի հանքարդյունաբերության ասպարեզում:

Յուտայի նահանգի Դենդի Քրոսինգ շրջանում հանքախուզության ընթացքում իր գիտական կարողությունների շնորհիվ հանգել է այն եզրակացության, որ Կոլորադո գետը, բխելով օգտակար հանքերով հարուստ ժայռոտ լեռնաշղթայից, պետք է, որ իր մեջ կրի այդ լեռների ստորոտներից սրբված ոսկու ավազներ: Ուստի և նույն գետի հովիտը հետազոտելու նպատակով 1898 թ. գնել է մակույկ, որտեղ տեղավորել է իրեն անհրաժեշտ իրերը, աշխատանքի գործիքները, սննդամթերքի պաշարը և այլն ու սկսել է նավարկել Կոլորադո գետն ի վեր՝ մինչև 60 մղոն: Դժբախտաբար, սահանքից անցնելու պահին մակույկը շրջվել է, և Հովհաննեսը, ամեն ինչ կորցնելով, հրաշքով փրկվել է հայտնվելով Գրանդ Քանյոն կոչվող անմարդաբ-

նակ կիրճի ափերին:

Ժամանակին Կ. Պոլսում լույս տեսնող «Բիւզանդիոն» ազգային-քաղաքական, գրական-գիտական օրաթերթը «Հայ հանքագործի մը արկածները» հոդվածում, անդրադառնալով բնագետ Հովհաննեսի ամերիկյան անհավանական արկածներին, գրել է. «Արիզոնայի (Մ. Նահանգներ) թերթերը պատմութիւնը կ'ընեն հանքագործ գիտնական Հայու մը, որ շատ տարիներ առաջ, արկածի մը բերմամբ, փակուներ է Քոլորադոյի գետերուն կազմած մեծ հովտին մէջ (Grand Canyon), և հոն կ'ապրի առանձին, արտաքին աշխարհէն տարանջատ, իր կեանքին մնացած տարիները նուիրած ըլլալով Բնութեան գաղտնիքներուն գործնական ուսումնասիրութեան»:

Հետագայում, Կ. Պոլսում լույս տեսնող ազգային-քաղաքական «Մասիս» շաբաթաթերթը ևս, ներկայացնելով «իրական կեանքի դրուագ մը» հայազգի հանքագործ գիտնական Զոն Վարդանի «շահեկան արկածներուն պատմութիւնը», նրան բնութագրել է որպես «Հայ Ռօպէնսոն մը», որը մեկ տասնամյակ առաջ խափանվել էր Գրանդ Կոլորն գետերի խառնարանը կազմող Կոլորադոյի Գրանդ Քանյոն կոչվող կիրճում և ապրել արտաքին աշխարհից կտրված, առանձնացած կյանքով՝ նման Դանիել Դեֆոյի հանրահայտ «Ռոքինգոն Կրուզը» վեպի գլխավոր հերոսի արկածներին:

«Մասիս» շաբաթաթերթը, տվյալներ քաղելով «Բիւզանդիոնից», պատկերավոր կնկարագրել է այն անմարդաբնակ միջավայրը, որտեղ հայտնվել էր «Հայազգի Ռոքինգոն Կրուզոն». «...Սէկ կողմը խորունկ

հոսանուտ գետն էր, միւս կողմն հազարաւոր ուղբ բարձրութեամբ սեպ ժայռերու բարձունք: Վեց շաբաթ [Հովհաննեսը] քալեց կամ մազլեցեալ, մինչեւ որ անցը մը գտաւ ժայռերու այս կոյտին մէջէն: Ուրիշ ուտելիք չունէր բայց եթէ Բանեոնի հովտին խոտերը, եւ քաղցուս (հնդկաթգնի, կակտենի) բոյսը, պահ[ա]ծու բակայի մէկ փոքր տուփէն գատ զոր ջուրերը ցամաք նետած էին իր մակոյկէն: Ժայռերու կոյտին խորը քաղուած սոյն հովիտը, շաբաթներով տեղ, արեւ չի տեսներ բնաւ: 24 ժամուան մէջ հազիւ մէկ քանի վայրկեան ժայռերու պատառուածքի մը մէջէն արեւու շող մը կ'անցնէր, բայց այնքան տաք որ Վարդան կրնար ապակիի մը օգնութեամբ խոտ բռնկցնել եւ կրակ գոյացնել յիշեալ բոյսը խաշելու համար: Օրերով մազլեցել է ետքը ժայռերու վրայ, կը տեսներ որ անցը կարծածը փակ էր ետեւի կողմէն, ուստի վար կ'իջնէր, եւ ուրիշ ժայռի մը կողերուն վրայ կը մազլեցէր, ործաքարի նոյն հիւրամերձ պարիսպները գտնելով ամէն կողմ»:

Զոն Վարդանն ամայի միջավայրում և վայրի բնության գրկում ենթարկվել է աներևակայելի և գերմարդկային տոկունության պահանջող արկածների: Այդ ամենի հետ մեկտեղ, որպեսզի սովամահ չլինի, ստիպված է եղել նույնիսկ օձի միս և այլ աներևակայելի «սնունդ» ճաշակել:

Ճակատագրի բերումով մենության դատապարտված հայազգի գիտնական-հետազոտողն իր ժամանակն ու օրերն ի գուր չի անցկացրել, այլ նոր, անսովոր հանգամանքներից օգուտ քաղելով, սկսել է գործնականում անմիջականորեն ուսումնասիրել բնությունն ու նրա զարմանահարաշ գաղտնիքները:

Երկար դեգերումներից և անմարդաբնակ փակուղի միջավայրից ելքեր փնտրելուց հետո Հովհաննեսը վերջապես կարողացել է ճանապարհ գտնել դեպի Յուտայի անապատ: Սակայն, 16 օր անապատի մեջ սոված-ծարավ քայլելով, վերջապես ուժապառ ընկել է անծայրածիր անա- ➤8



Գրանդ Քանյոն - Մեծ Կիրճ ԱՄՆ-ում

«Նրա անունը կարող է ո՛չ պետք է, պարտադիր պետք է դրվի ոչ միայն եզդի, այլև հայ նշանավոր հերոսների անունների հետ միևնույն շարքում»

Գեներալ Թովմաս ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆ
Հայոց սպարապետ

Կյանքը մոռացում չի հանդուրժում:

Ձնը վում են բառերը, սովորական են դառնում հասկացությունները, բայց կա անսասան, անանցանելի, ժամանակին չենթարկվող ինչ-որ բան, առանց որի մարդ չի կարող գոյություն ունենալ:

Դա բարեկամությունն է, ճշմարիտ, դարավոր բարեկամությունը հայերի և եզդիների:

Նի գավառի մեծահարուստ ընտանիքների միջև: Շաբաթներով այդ ընտանիքներում հյուրընկալվում էր, մտերիմ էր նրանց գավառների հետ: Գիտեր հարևան հայկական գյուղերի անվանի և քաջ մարդկանց: Հարգանքով էր լցված խմբապետ Մուշեղի, Գևորգի, Դավի Դազոյի, վերջինիս կնոջ՝ Մարիամ խաթունի նկատմամբ:



«...Նրա անունը պետք է դրվի հայ նշանավոր հերոսների կողքին»

Հայ և եզդի ժողովուրդների բարեկամությունը գալիս է դարերի խորքից: Պատմությանը հայտնի չէ մի դեպք, որը մթագնի այդ անդամաժան բարեկամությունը: Այդ բարեկամության մեծ ջատագովներն են եղել ինչպես հայ, այնպես էլ եզդի ժողովրդի շատ արժանավոր գավառներ՝ Պողոս քահանան, Ուսուր Բեզը, գորավար Անդրանիկը, Ջհանգիր աղան, Միր Իսմայիլը:

Այսօր էլ բերնեբերան պատմվում է գորավար Անդրանիկի և Ջհանգիր աղայի մեծ բարեկամության մասին:

Ջհանգիր աղայի անունը հավասարապես բանկ է թե՛ եզդի և թե՛ հայ ժողովրդի համար:

Ջհանգիր աղան ծնվել է 1874 թ. Վանի նահանգի Բերկրի գավառի Չիբուխի գյուղում եզդիների գնդապետ մեծահարուստ խառնիք աղայի ընտանիքում:

Նա չսովորեց փափուկ, ճոխ կյանքին: Մանկուց աչքի էր ընկնում իր ծարավությամբ, համարձակությամբ ու խելքով: Ամբողջ գավառում նրա նման ծի վարող և հրացան բռնող չկար:

Զմռան երկար գիշերներին սիրում էր օդաներում մեծերից

Հայերի հետ բարեկամությունը գալիս էր պապերից:

Պապի հայրը՝ Բշար փաշան, Սղեղի կիսանկախ գավառի իշխան Շեխ Միրզայի զինակիցն էր: Շեխ Միրզայի ռուսական կողմնորոշումը, հայերի նկատմամբ տածած սիրո և հարգանքի մասին գրել են անգլիացի հայագետ Լեյարդը, հայ նոր գրականության հիմնադիր խաչատուր Աբովյանը: Շեխը Ռոզևան քաղաքի հայկական համայնքի համար իր միջոցներով եկեղեցի է կառուցում, իր երեխաներին կրթության է տալիս հայ ուսուցիչների մոտ: Նա հայերի միջոցով Կովկասի ռուսական փոխարքային մի նամակ է ուղարկում, որով իր հավատարմությունն է հայտնում ռուսական կառավարությանը և իր պատրաստակամությունը՝ զորքով միանալու ռուսական զորքին: Թուրքական կառավարությունը չի հանդուրժում Սղեղի այդ անկախ վիճակը, զորք է ուղարկում՝ գավառը ռպատակեցնելու: Շեխ Միրզայի ուժերը հաղթում են: Դիարբեքի թուրք ղեկավարը դիմում է խորամանկության: Շեխին կանչում է իր ապարանք և նենգաբար սպանում: Սկսվում է Ռոզ-

պանել իր համայնքն ու հավատը:

Ահա այդ միջավայրում մեծացած Ջհանգիր աղան ուներ ընդգծված կողմնորոշում, որի մասին գիտեին նրա շրջապատի ցեղապետերը, հայ բարեկամները և թուրք փաշաները: 1904 թ. Բերկրի հայկական Հազարան գյուղում նա հանդիպում է Անդրանիկ գորավարի հետ: Ջորավարին դուր է գալիս բնավորությամբ պարզ, անմիջական, խիզախ ու անվախ երիտասարդը: Ջհանգիր աղան հենց առաջին հանդիպումից հարգանքով է լցվում առասպելական այդ մարդու նկատմամբ: Ջորավար Անդրանիկը տեղեկանում է, որ Ջհանգիր աղան նշանված է և իր պատրաստակամությունն է հայտնում դառնալու նրա հարսանիքի քավորը: Այդ օրվանից սկսվում է նրանց բարեկամությունը, բարեկամություն, որ փորձության ենթարկվեց հերոսական պայքարի խաչմերուկներում, ամրապնդվեց արյունով, կովի, ավերի, գաղթի, կորուստների ճանապարհների վրա, դժվար օրհասական ժամանակներում:

Ռուս-հայկական զորքերի հետ եզդիներն էլ մասնակցում են Ղարսի, Սարիղամիշի կռիվներին՝ ցույց տալով հերոսության, անձնագոհության օրինակներ: Այդ կռիվներում ցուցաբերած խիզախության համար Ջհանգիր աղան արժանանում է Գեորգիևյան խաչի:

1918 թ. գարնանը թուրքերը գրավում են Ղարսը, մտնում Ղարաքիլիսա, Բաշ Ապարան: Նորից գաղթ, գրկանքներ, կորուստներ: Իզդիրից Ղարաղալայի կամրջով Արաքսի մյուս ափ է անցկացվում հայ և եզդի տեղացի ու գաղթական ամբողջ բնակչությունը, Թաղոսի բնդանոթով պայթեցվում է կամուրջը՝ թուրքերի մուտքը վարարած գետով դարձնելով անհնարին: Հենց նույն գիշերը, չսպասելով հրամանի, Սուլաբայազետ գյուղի մոտ Ջհանգիր աղայի ուժերը հարձակվում են անարգել արշավող թուրքական զորքերի վրա: Անսպասելի հարձակումը ոչ միայն կասեցնում է թշնամու առաջխաղացումը, այլև

մեծ կորուստներ պատճառելով՝ հնարավորություն է տալիս հայկական զորքերին դասավորվելու և պատրաստվելու հակահարվածի: Աղան գիտեր թշնամու թույլ կողմերը, գիտեր, որ թուրքերը գիշերները չեն կարող կռվել, դրա համար էլ նա հենց գիշերներն էր հարձակվում նրանց վրա: Այդ կռիվներում Ջհանգիր աղան նվաճեց «Հայ ժողովրդի անկեղծ դաշնակից» անունը:

Տազնապալի լուրեր էին ստացվում դեպի Բաշ Ապարան շարժվող թուրքական զորքերի գրաված բնակավայրերից, թշնամին իր ճանապարհին ավերում, կողոպտում էր ամեն ինչ, սպառնալիք ստեղծում երևանի գրավման և քիկունքից Սարդարապատին հարվածելու համար: Հրամանատարությունը որոշում է Բաշ Ապարան ուղարկել նաև Ջհանգիր աղայի աշխարհագրայինները: Աղայի 1500 ծիավորները, ռզկորված Սարդարապատի հաղթանակով, տեղանքը լավ իմացող Ալազյազի եզդիների ուղեկցությամբ լեռնային կարճ ճանապարհով հասնում են Բաշ Ապարան և Զյուլուջա գյուղ, կտրում թշնամու ճանապարհը: Ահեղ կռիվներ էին, թուրքական բանակն ամեն ինչ անում էր՝ պաշտպանությունը ճեղքելու և երևան առաջանալու համար: Սակայն Ապարանը դարձել էր անառիկ ամրոց: Կամավորական ջոկատները, շրջակա գյուղի բնակիչները, Ջհանգիր աղայի հեծյալները, անգամ գաղթականների խմբերը պողպատյա վահանի նման կանգնած էին թուրքական արյունաբերու զորքի դեմ: Աղայի ջոկատներն այստեղ էլ ահ ու սարսափ էին դարձել հակառակորդի համար: Հարձակումները նրանց վրա կատարվում էին հանկարծակի և անսպասելի: Այդ ծանր վիճակից դուրս գալու համար թուրքերը սպիտակ դրոշմներով հաշտության համար պատվիրակություն են ուղարկում Բաշ Ապարանի ճակատի հրամանատար Դյուրի մոտ՝ պատճառաբանելով, թե իբր Բաթումում թուրքական և հայկական պատվիրակների միջև հաշտության պայմանագիր արդեն կնքվել է, արյունահեղությունը ոչ մի կողմի օգուտ չի բերի: Այնինչ այդ ժա-

մանակ դեռ հաշտություն չկար: Դրոն համաձայնվում է: Ջհանգիր աղան տեղացի հայ առաջնորդների հետ, չենթարկվելով հրամանին, ջախջախիչ հարվածներով թուրքական զորքին հետ է շարտում մինչև Ալեքսանդրապոլ...

Հուլիս է եղել Անդրանիկի և Ջհանգիր աղայի՝ 1919 թ. հանդիպումը Էջմիածնում, որը, ավաղ, եղավ վերջինը: Ահա այդ մասին ինչ է պատմում աղայի զինակիցներից մեկը՝ 90-ամյա Ավդոն. «Մենք հաստատվել էինք Արագածի լանջի եզդիական գյուղերում: Աղան ընտանիքով ապրում էր Ջառջառիսում (այժմ՝ Արագածոտնի մարզի Դերեկ գյուղում): Մի առավոտ ինձ կանչեց և ասաց, որ պետք է իրեն ուղեկցենք Էջմիածին, Անդրանիկն է կանչել: Անդրանիկը մեզ դիմավորեց վանքի բակում: Նրանք ջերմ գրկախառնվեցին: Առանձնացան: Խոսակցությունը երկար տևեց: Հիշում եմ, գորավարն աղային ընտիր չորեր նվիրեց: Վերադարձին աղան տխուր էր, մտամոլոր: Չէր խոսում, միայն ասաց, որ գորավարը գնում է արտասահման»:

Ինչ էին խոսել, ինչի մասին էին խորհել՝ չգիտենք: Միայն մի բան պարզ է. Նրանց խոսակցության նյութը երկու բախտակից ժողովուրդների ազատության, համագործակցության, ապագայի մասին պիտի լիներ: Այդ հետևությանը կարելի է հանգել 1920 թ. Նյու Յորքից իր նախկին անձնական քարտուղար եղիշե Քաջնունուն գորավարի գրած նամակի հետևյալ տողերից. «... Ջերմ ողջույններ Ջհանգիր աղային և նրա աներոջը: Նրանց էլ ասեք, որ նրանց շատ պետք կգամ»:

Ջհանգիր աղան ողջունեց խորհրդային կարգերի հաստատումը:

Հասկացավ, որ խորհրդային Հայաստանում իր ժողովրդի հատվածը կարող է ազատվել կործանումից, կրոնական հալածանքներից, ունենալ դպրոց, գիր-գրականություն, ապրել բոլորի պես, բոլորին հավասար, հաշտ ու խաղաղ:


Ստալինյան ռեպրեսիաների դժոխակ տարիներն իրենց հորձանուտի մեջ առան նաև հայ և եզդի ժողովուրդների մեծ գավակ Ջհանգիր աղային: 1938 թ. Նրան տարան...

Գնաց ու չվերադարձավ: 1959 թ. օգոստոսի 13-ին՝ Ստալինի մահից տարիներ հետո, հարազատները ստացան գրություն նրա անմեղության մասին:

Նա երգ է դարձել ու լեգենդ, աղոթք ու երգում իր ժողովրդի սրտում:

Այսօր չկա Ջհանգիր աղան, սակայն կա եզդի ժողովուրդը, որը, հավատարիմ իր նախորդ սերունդների լավագույն ավանդույթներին, մշտապես կանգնած է հայ ժողովրդի կողքին՝ կիսելով նրա թե՛ վիշտը և թե՛ ուրախությունը:

Ձեմֆիրա ԽԱՏԻԵՎԱ
Ջհանգիր աղայի բռնմունքին,
ՀՀ ԳԱԱ հիմնադր
գրադարանի ենթաբաժնի
վարիչ



լսել առասպելներ, լեգենդներ, եղելություններ քաջ, անվանի մարդկանց մասին: Պարզ էր ու արդարամիտ, չէր հանդուրժում թուրքական կառավարության բռնությունները, բարբարոսությունները գյուղացիների նկատմամբ: Կապված էր հայերի հետ: Բարեկամական ամուր կապ էր ստեղծվել՝ հոր և Վա-

ևանի հերոսամարտը: Ավերակների են վերածվում շեն քաղաքներն ու գյուղերը:

Բերկրի գավառի ամենահարուստ ցեղապետը՝ խառնիք աղան, մահից առաջ խորհուրդ է տալիս որդուն իր հարստությանը գնեք, ծիեր, գնեք, զինեք իր համայնքի տղամարդկանց, այդ «գուլում» երկրում պաշտ-

քերի մուտքը վարարած գետով դարձնելով անհնարին: Հենց նույն գիշերը, չսպասելով հրամանի, Սուլաբայազետ գյուղի մոտ Ջհանգիր աղայի ուժերը հարձակվում են անարգել արշավող թուրքական զորքերի վրա: Անսպասելի հարձակումը ոչ միայն կասեցնում է թշնամու առաջխաղացումը, այլև



Մեր Նշանավոր հայրենակցի մասին

Լրացավ Մոսկվայի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետի պրոֆեսոր, կենսաբանական գիտ. դոկտոր, ՌԴ ԳԱ Զննաբանության ինստիտուտի կաթնասունների բաժնի վարիչ, Ռուսաստանի թերիոլոգիական (կենդանաբանական) ընկերության փոխնախագահ, կենդանաբանական և հնէաբանական ուղղվածության գիտական հանդեսների խմբագրական կոլեգիաների և խորհուրդների անդամ, աշխարհահռչակ հնէաբան Ալեքսանդր Կարենի Աղաջանյանի 70-ամյակը:

Ա.Կ. Աղաջանյանը ծնվել է Մոսկվայում 1940թ. ճարտարագետ-ճանապարհաշինարար Կարեն Աղաջանյանի և պատմաբան-գրադարանավոր Օլգա Երմոլովայի ընտանիքում: Կարեն Աղաջանյանի մայրը՝ Անահիտ Լիսինյանը, մայրական կողմից սերում էր հռչակավոր Լոռի-Մելիքովների իշխանական տոհմից, իսկ հայրը՝ ալեքսանդրապոլցի Օնիկ Աղաջանյանը, հայտնի ճարտարագետ-հիդրոշինարար էր, որի անմիջական մասնակցությամբ կառուցվել էր Էջմիածնի ջրանցքը:

Ա.Կ. Աղաջանյանը 1965թ. ավարտում է Մոսկվայի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետը և իրեն ամբողջ

ջովին նվիրում կենսաբանական և երկրաբանական գիտությունների սահմանագծային խիստ արդիական մի գիտական ուղղվածության՝ պլիոցեն-չորրորդական ժամանակաշրջանի (վերջին 5 միլիոն տարվա) բրածո մանր կաթնասունների հնէաբանական ուսումնասիրություններին:

Զննաբանական այդ ճյուղի զարգացման արդիականությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ մանր կաթնասունների (չղջիկներ, նապաստակամաններ, կրծողներ, միջատակերներ), մասնավորապես բրածո կրծողների ատամների ծամող մակերեսների հնէաբանական ուսումնասիրությունների մեթոդը վերը մատնանշված ժամանակահատվածի նստվածքային ապարների երկրաբանական հասակը քվադրելու բոլոր եղանակները հարաբերական մեթոդներից օժտված է ամենամեծ ճշգրտությամբ: 1971 թ. Ա. Աղաջանյանը, տվյալ հնէա-

դոնի, Ֆիզի, Սամոա և այլն:

Իր հետագա բեղուն գիտական գործունեության ընթացքում Ա. Աղաջանյանը լայնածավալ և նպատակասլաց հնէաբանական պեղումներ է կատարում Մոսկվայի ԽՍՀՄ համարյա թե ամբողջ տարածքում: Դոն և Դնեպր գետերի ավազաններից Ազովի ծովի մերձափնյա շրջաններից մինչև Յակուտիա և Չուկոտկա՝ հիմնական ուշադրությունը սևեռելով Ռուսական հարթության տարածքին, ինչպես նաև կարճաժամկետ հնէաբանական պեղումներ է կատարում Մոնղոլիայում և Չեռնոգորիայում, հայտնաբերում է հարյուրից ավելի պլիոցեն-չորրորդական ժամանակահատվածի տարբեր հորիզոններին պատկանող հարյուրից ավելի բրածո մանր կաթնասունների տեղավայրեր: 1992 թ. Ա.Կ. Աղաջանյանը Մոսկվայում պաշտպանում է «Ռուսական հարթության պլիոցեն-պլեյստոցենի մանր կաթնասուններ»

քում հայտնաբերում է «Կազաչի պոստ» «Արափի-1» և «Արափի-2» տեղավայրերը, որի արդյունքները համատեղ հրատարակվել են շատ հեղինակավոր բյուլետենում:

Զետագա տարիներին տողերիս հեղինակը, կիրառելով տվյալ հնէաբանական մեթոդը, Զայաստանի տարածքում հայտնաբերում է պլիոցեն-չորրորդական հասակի և մի քանի բրածո մանր ողնաշարավորների տեղավայրեր, այդ թվում՝ աշխարհահռչակ ստորին պլիոցենի (4.8 – 4.6 մլն տարի առաջ ընկած ժամանակահատված) Նուռնուս գյուղի շրջակայքի տեղավայրը, որն ամբողջ եվրասիայի տարածքում հինգերորդն է և առավել ներկայացուցչականը:

Ներկայումս Ալեքսանդր Աղաջանյանը պլիոցեն-չորրորդական բրածո կրծողների և միջատակերների մորֆոլոգիայի, կարգաբանության, էվոլյուցիայի և կենսաշրտագրության բնագավառների համաշխարհային առաջատարներից մեկն է, որի հիմնարար և նորարարական գիտական աշխատանքների վրա բազմիցս հղումներ են արել և անում են վերոնշյալ բնագավառների այնպիսի նշանավոր եվրոպական մասնագետներ, ինչպիսիք են պրոֆեսորներ Ժ. Ազիլյուրը, Ժ. Արտեմերսեն, Կ. Կովալսկին, Մ. Կրետցոյը, Զ. Ռեպենինգը, Ա. Ստակիշը, Զ. Տրեմերը, Ֆ. Ֆայրուշը, Ժ. Շալինը, Դ. Յանոշին և այլք:

Ա. Աղաջանյանը հեղինակ և համահեղինակ է 9 մենագրության և ավելի քան 200 հոդվածի, որոնք տպագրվել են ինչպես ռուսական, այնպես էլ եվրոպական ամենահեղինակավոր բնագիտական պարբերականներում:

Ալեքսանդր Աղաջանյանի անմիջական գիտական ղեկավարությամբ պաշտպանվել է 10 թեկնածուական ատենախոսություն (այդ թվում՝ տողերիս հեղինակի կողմից): Պրոֆեսոր Աղաջանյանին իրենց ուսուցիչ են համարում այնպիսի խոշոր մասնագետներ, ինչպիսիք են՝ ՌԴ ԳԱ թղթակից անդամ Նիկոլայ Սմիռնովը (Եկատերինբուրգ) և կենսաբանական գիտությունների դոկտոր Անատոլի Մարկովան (Մոսկվա):

1993թ. պրոֆեսոր Աղաջանյանը դասա-

վանդում է «Զննաբանականություն» առարկան Մոսկվայի համալսարանի կենսաբանական ֆակուլտետում:

Հայկ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄՅԱՆ
Երկրաբանական գիտ. թեկնածու

2010 և 2011թթ. ԳՀ կառավարությանն ուղարկված՝ գյուղատնտեսության բնագավառում ցեղիկների կիրառության վերաբերյալ իմ առաջարկությանն ի պատասխան ԳՀ գյուղատնտեսության փոխնախարար պարոն Մակարյանի ստորագրությամբ ստացա մի զարմանահարաշ պատասխան, որն ավելի շատ նման է հանելուկների շարանի, քան պատասխանի: Նշեմ, որ պարոն Մակարյանի հանձնարարությամբ պատասխան պատրաստողների անուն-ազգանուններն ու զբաղեցրած պաշտոններն իմ հայտնի չեն, քանի որ այդ պարոնայք չեն բարեհաճել գրել այդ մասին:

Հարգարժան ընթերցողներին ծանոթացնեմ վերը նշված իմ առաջարկության բովանդակությամբ:

Հանրահայտ է, որ ԳՀ տարածքի ավելի քան 2/3 մասը ծածկված է հորաքարով և խորքային ծագման (ինտրուզիվ) ապարներով, որոնց հաշվին էլ գոյացել է տվյալ տարածքի բուսահողը: Դեռ այդ պատճառով էլ (ինարկե, և այլ պատճառներով) ԳՀ տարածքի մեծ մասի բուսահողի մեջ առկա են ծանր մետաղներ (պղինձ, մոլիբդեն, ռենիում, կապար, ցինկ, սնդիկ, կադմիում և այլն), բուսահարույց հատկություններ ունեցող տարրեր (սելեն, տելուր, մկնդեղ, բերիլիում և այլն), ինչպես նաև ռադիոակտիվ իզոտոպներ (ցեզիում՝ 137 և ստրոնցիում՝ 90): Նշված ծանր մետաղները, թունավոր ու ռադիոակտիվ տարրերն էլ, անցնելով կերպարույթների մեջ, թափանցում են մարդկանց ու կենդանիների օրգանիզմ և պատճառ դառնում թունավորումների, բազմեղի, սիրտ ա-նոթային և այլ հիվանդությունների առաջացմանը:

Միևնույն ժամանակ, ինչպես տեղյակ են գյուղատնտեսությանն առնչվող մարդիկ, ամենուրեք քաղցրահամ ջրի առյուծի բաժինն օգտագործվում է գյուղատնտեսության ոռոգման բնագավառում (տարեկան 1.8-2.3 մլրդ խոր.մ) և քանի որ համաշխարհային մասշտաբով քաղցրահամ ջրերի ռեսուրսները, հատկապես խմելու համար պիտանի ջրերի, խիստ սահմանափակ են (մի քանի տասնյակ երկրներ խմելու համար պիտանի մաքուր ջուր ընդհանրապես չունեն), անհրաժեշտություն կա, և հետագայում ավելի ևս կլինի, տնտեսել ԳՀ քաղցրահամ ջուրը, որքան հնարավոր է:

Մեր վերը նշված առաջարկությունն էլ հենց նպատակադրված է այդ հարցերի լուծմանը: Բուսահողից ծանր մետաղները, թունավոր ու ռադիոակտիվ տարրերը կլանելու և դրանց թափանցումը կերպարույթների մեջ արգելակելու, ինչպես նաև բավականաչափ քաղցրահամ ջուր տնտեսելու գործին մեծապես կարող են օգնել բնական ցեղիկները, որոնք առատորեն տարածված են ԳՀ Նոյեմբերյանի շրջանում:

Մի «հանելուկային» պատասխանի առթիվ

րը, որոնք առատորեն տարածված են ԳՀ Նոյեմբերյանի շրջանում:

Իմ առաջարկությունն այն է, որ ԳՀ բուսահողին խառնվի բնական ցեղիկների 45 և ավել 63 տ/հա քանակությամբ, որոնց պարագայում տարեկան հնարավոր կլինի 2-3-ով կրճատել ոռոգումների քանակը, տնտեսել 144 և 200 մլն խոր.մ ջուր, որը, հետագայում նավթից ավելի թանկ գներով հնարավոր կլինի վաճառել հարևան սակավաջուր երկրներին և Զայաստան բերել միլիարդավոր դոլարներ: Դրան զուգահեռ, բուսահողին ցեղիկի հավելումով հնարավոր կդառնա առավելագույնս արգելակել ծանր մետաղների և ռադիոակտիվ ու թունավոր տարրերի թափանցումը մարդու օրգանիզմ:

Մոսկվայի հազվագյուտ տարրերի հանքաբանության, երկրաբանիայի և բյուրեղագիտիայի գիտահետազոտական ինստիտուտում գիտությունների դոկտոր Նիկոլայ Չելիշևի գլխավորությամբ կատարված հետազոտություններով պարզվել է, որ բուսահողին՝ դրա 0.5-1 տոկոսի չափով ավելացված բնական ցեղիկը (կլինոպտիլոլիտ հանքանյութ) հողից կլանում է ստրոնցիում և ցեզիում ռադիոակտիվ իզոտոպները, ինչպես նաև մի քանի ծանր մետաղներ: Ն. Չելիշևը գրում է. «Նոյեմբերյանի հանքավայրի բնական ցեղիկները հողին ավելացնելիս մի շարք թունավոր մետաղների ակտիվությունը կտրուկ նվազում է: Փորձերը ցույց են տվել, որ ռադիոակտիվ իզոտոպներով վարակված հողին Նոյեմբերյանի հանքավայրի կլինոպտիլոլիտ խառնելիս կանաչ զանգվածում ռադիոակտիվ ստրոնցիումի և ցեզիումի պարունակությունը զգալիորեն նվազում է: Կլինոպտիլոլիտի կողմից կլանվելու հաշվին գյուղատնտեսական մշակաբույսերի մեջ զգալիորեն նվազում է այնպիսի թունավոր մետաղների պարունակությունը, ինչպիսիք են՝ սնդիկը, կապարը, ցինկը, կադմիումը և այլն»:

Այժմ ընթերցողի դատին են ներկայացնում պարոն Մակարյանի պատասխանում գրված «հանելուկների» բովան-

դակությունը: Պարոն Մակարյանն իմն գրում է. «Հարգելի պարոն Ավագյան. Չեր կողմից ԳՀ վարչապետ պարոն Տ. Սարգսյանին հասցեագրված 06.05.2011թ. դ150/13596 դիմումի կապակցությամբ հայտնում եմ, որ ԳՀ գյուղատնտեսության նախարարության «Հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ում քննարկվել է դիմումում բարձրացված հարցը, որի վերաբերյալ 2011թ. մայիսի 24-ի դ 055/37 գրությամբ նախարարություն է ներկայացվել եզրակացություն այն մասին, որ ցեղիկի կիրառման դերը հողերում խոնավության, սննդատարրերի և ծանր մետաղների կլանման գործում վաղուց է ուսումնասիրված: Սակայն դրա մասսայական կիրառումը բոլոր հողատեսքերում, մասնավորապես ծանր մեխանիկական կազմ և հիմնային ռեակցիա ունեցող հողերում, այն էլ 63 տ/հա նորմայով, անթույլատրելի է: 63 տ/հա կիրառումը կհանգեցնի հողերի հիմնային բարձրագույն բարձրացմանը, իսկ ցանք նորմայի դեպքում այն չի կարող կատարել իրեն վերագրվող հատկությունները՝ խոնավության, սննդատարրերի և ծանր մետաղների կլանում: Բացակայում է դրա կիրառման տնտեսական հիմնավորվածությունը, քանզի ցեղիկի 1 տոննայի արժեքը կազմում է 120 ԱՄՆ դոլար, 1 հեկտարի հաշվով ծախսը միայն ցեղիկի ծեռքերում համար կազմում է շուրջ 7500 ԱՄՆ դոլար, չհաշված տեղափոխման և հող մտցնելու ծախսերը, որը շատ ավելի բարձր է, քան խնայվող ջրի ծախսը»:

Սկսեմ մեկ առ մեկ մեկնաբանել պարոն Ռ.Մակարյանի ստորագրությամբ ստացածս պատասխան-հանելուկը:

Ա. Այդ ո՞ւմ և երբվանից է հայտնի «ցեղիկի կիրառման դերը հողերում խոնավության, սննդատարրերի և ծանր մետաղների կլանման գործում», ո՞ւմ կողմից է ուսումնասիրված Զայաստանում, և ի՞նչ արդյունքներ են ստացվել: Որպես ԳՀ ցեղիկների առաջին հայտնաբերող և հետազոտող ես, որքանով տեղյակ եմ, Զայաստանում ոչ մեկի կողմից և երբևիցե ցեղիկները որպես բուսահողի հա-

» 6 վելանյութ թե՛ խոնավության պահպանման և թե՛ ծանր մետաղների, ռադիոակտիվ և թունավոր տարրերի կլանման նպատակով չեն հետազոտվել, և այդպիսի աշխատանք գոյություն չունի: Ճիշտն այն է, որ 33 ցեղիսններն առաջին անգամ հայտնաբերվել են շատ վաղուց՝ 1972թ., բայց միայն այդքանը:

Նշեն, որ 3այկական խՍՀ նախարարների խորհուրդն իր 548 (14 սեպտեմբերի 1983թ.) որոշման մեջ նշել է. բնական ցեղիսների օգտագործման հիմնական ուղ-

իմն հայտնի չէ, թե՛ պարոն փոխնախարարը կամ նա- մակ կազմողները որտեղի՞ց են վերցրել այդ արժեքը՝ 120 ԱՄՆ դոլարը, երբ Նոր Կողքի տեղամասի ցեղիսները բաց- հանքով շահագործելու պարագայում «Չայգունեցիտ- նախագիծ» ինստիտուտի կողմից 1990թ. կազմած տեխնի- կատնտեսական հաշվարկի համաձայն, մեկ խոր.մ հանքաքարի արդյունահանման ինքնարժեքը կազմել է 0,74 խՍՀ ռուբլի (մեկ խոր.մ հանքաքարի քաշը կազմում է 2տ, հետևապես մեկ տոննա հանքաքարի արդյունահանման

Մի «հանելուկային»...

ղությունները հաստատել

ա) բնական ցեղիսների կիրառումը, որ- պես խոշոր եղջերավոր կենդանիների, խո- զերի և թռչունների կերաբաժնի հավելում,

բ) ցեղիսների օգտագործումը հոսքաշ- ռերի մաքրման գործում,

գ) բնական ցեղիսների հենքի վրա սինթետիկ ցեղիսների ստացման, սինթե- տիկ լվացանյութերի, գազերի մաքրման ու չորացման, հեղուկների և յուղերի ստաց- ման գործընթացներում ներդրելու համար: Ինչպես տեսնում ենք, հողագործության մեջ բնական ցեղիսների կիրառության մասին խոսք անգամ չկա, և, հետևապես, այդ ուղ- ղությամբ աշխատանքներ չեն կատարվել (իսկ եթե խՍՀ-ի փլուզումից հետո 33-ում այդպիսի աշխատանքներ կատարվել են, խնդրում են պարոն Ռ.Մակարյանին ցույց տալ և «լուսավորել» ինձ):

Բ. Այդ ի՞նչ «սնդդատարրերի» մասին է խոսքը, որ պարոն Մակարյանի ստորագրությամբ ինձ է ու- ղարկվել: Չէ՛ որ ես ոչ մի «սնդդատարրի» մասին էլ չեմ գրել:

Գ. Այնուհետև իմ առաջարկությանն ի պատասխան գրված նամակում հատկապես նշված է. «Մակայն դրա մաս- սայական կիրառումը բոլոր հողատեսքերում, մասնավորա- պես ծանր մեխանիկական կազմ և հիմնային ռեակցիա ու- նեցող հողերում, այն էլ 63 տ/հա նորմայով անթույլատրելի է...»: Դարձեր են առաջանում.

1. Ինչո՞ւ է անթույլատրելի:

Ռ՝վ է հետազոտել և հաստատել, որ անթույլատրելի է: Ի՞նչ փոփոխություններ է կրում ծանր մեխանիկական կազմ և հիմնային ռեակցիա ունեցող հողը ցեղիսների ներդրման հետևանքով:

Չկա այդպիսի հետազոտություն (ենթադրություններն այստեղ անթույլատրելի և ավելորդ են):

Ինձ հասցեագրված պատասխանում այնուհետև գրված է. «63 տ/հա կիրառումը կհանգեցնի հողերի հիմնայնության բարձրացմանը, իսկ ցածր նորմայի դեպքում այն չի կարող կատարել իրեն վերագրվող հատկությունները, խոնավու- լան, սնդդատարրերի և ծանր մետաղների կլանում»:

Նորից հարցեր և հարցեր.

1. Այդ ո՞վ և ե՞րբ է հետազոտել, որ 63 տ/հա կիրառու- մը «կհանգեցնի հողերի հիմնայնության բարձրացմանը»:

2. 63 տ/հա քանակության բնական ցեղիսը մեկ հա հո- դատարածքում կարող է կազմել բուսահողի ընդհանուր քա- նակի մոտավորապես 0,8 տոկոսը: Այդ ինչպե՞ս կարող է մեկ տոկոսից պակաս քանակությունը հիմնային դարձնել ան- բողջ 99,2%, այդ ի՞նչ սարսափելի հիմնային բաղադրու- լուն ունի բնական ցեղիսը, որ նման խոշոր ազդեցություն ունենա իրենից 100 անգամ քանակով ավելի բուսահողի վրա: Ստածե՛լ են արդյոք այդ մասին իմ առաջարկությանը պատասխան պատրաստողներն ու պատասխան ստորագ- րողը, եթե ոչ, ապա թող մտածեն:

3. Ի՞նչ են նկատի ունեցել նամակը պատրաստողները «ցածր նորմա» ասելով (հանելուկներով խոսելը գիտական չէ), եթե կա հետազոտություն, կա ցեղիսի քանակի մասին տվյալ, «որը չի կատարի իրեն վերագրվող հատկություն- ները», ինձ հասցեագրված նամակում պետք է նշվեր:

4. Եթե բնական ցեղիսները 63 տ/հա քանակով «բարձ- րացնում են հողերի հիմնայնությունը», ասել է թե փչաց- նում են հողերը, խիստ նվազեցնում են բերքատվությունը, ապա խնդրում են պատասխանել.

ա) այդ ինչպե՞ս է, որ Նոյեմբերյանի շրջանի Գոզվելի և Նոր Կողքի տեղամասերում (Աղբյուրեղանի հարևանությամբ) դեղձի և խաղողի այգիները, որոնք հիմա չկան (այդել են մեր հարևանները), որոնք տեղադրված էին ցեղիսներով իմ կողմից նշված 63 տ/հա քանակից շատ հարուստ հողա- տարածքներում, կրկնակի ու եռակի ավելի բերք էին տա- լիս, քան ցեղիսների դաշտից դուրս գտնվող այգիները (նշեն, որ այդ տարածքներում դեղձի յուրաքանչյուր ծառի տակ դրված էին 30-40 հենասյուներ՝ ծառերի ճյուղերը բեր- քի ծանրությունից չկտրվելու համար),

բ) այդ ինչպե՞ս է, որ ցեղիսների դաշտից դուրս նույն տարածքում (Նոր Կողքի տեղամասի հյուսիսային հատվա- ծում) նույնիսկ թփուտներ էլ չեն աճում (գնացե՛ք Նոր Կող- քի տեղամաս և տեսե՛ք ինքներդ):

Նամակում այնուհետև գրված է.

«Բացակայում է դրա կիրառման տնտեսական հիմնա- վորվածությունը, քանզի ցեղիսի 1 տոննայի արժեքը կազ- մում է 120 ԱՄՆ դոլար, 1 հեկտարի հաշվով ծախսը միայն ցեղիսի ձեռքբերման համար կազմում է շուրջ 7500 ԱՄՆ դոլար...»:



ինքնարժեքը 1990թ. որոշակի արժեքով կամ խՍՀ ռուբլով կազմել է 0,37 ռուբ- լի): Եթե Նոյեմբերյանի ցեղիսների Նոր- Կողքի տեղամասի շահագործման իրա- վունքը ստացած պարոններ Ա.Բրուտյա- նը և Ս.Աբգարյանը, որոնք մինչև այժմ դեռևս չեն կարողացել 100 տ ցեղիս վա- ճառել, այժմ մեկեն ցանկանում են 33 գ- յուղատնտեսության հաշվին միլիարդա- տեր դառնալ, դա նրանց չի հաջողվի, քանի որ այդ գնով ոչ մեկը նույնիսկ մեկ տոննա ցեղիս չի գնի:

Եթե 33 գյուղնախարարության ղեկա- վարությունը մտադրություն ունի գյուղա- տնտեսության մեջ (անասնակերի և հո- դագործության) կիրառելու 33 բարձրոր- ակ ցեղիսները, ես մեծ ուրախությամբ կարող եմ ցույց տալ ցեղիսների ձեռք- բերման շատ էժան (մոտ 12 անգամ էժան իրենց կողմից նշված 120 դոլ/տ-ից) ճա- նապարհ, այն է՝ ծախսել մոտավորապես 240 հազար ԱՄՆ դոլար, հետախուզել Նոր Կողքի տեղամասի արևմտյան թ- կի ցեղիսները և օգտագործել սեփական կարիքների հա- մար: Այդ պարագայում մեկ տոննա ցեղիսի արդյունահա- ման ինքնարժեքը՝ հետախուզման համար ծախսված գու- մարի հետ միասին, կարող է կազմել ոչ ավելի 10 ԱՄՆ դո- լարից (տվե՛ք այդ գումարը, պարոն փոխնախարար, և դուք կունենաք ծեր «սեփական» հանքավայրը և շատ էժան ցեղ- լիս:

Կցանկանալի խոսել ևս մի հարցի մասին: Դա այն է, որ նամակ պատրաստողների կարծիքով՝ «63 տ/հա ցեղիս չի կարելի կիրառել ծանր մեխանիկական կազմ և հիմնային ռեակցիա ունեցող հողերում»: Նախ՝ նշեն, որ այդ տեսակե- տը ոչնչով հիմնավորված չէ (այն մտացածին է և չըջանա- ռության մեջ է դրվել առաջարկությունը խոչընդոտելու և ա- մեն կերպ մերժելու նպատակով): Եվ, երկրորդ, ընդունենք, որ նամակ պատրաստողները և պարոն փոխնախարարը ճիշտ են, այդ պարագայում ի՞նչն է խանգարում, որ 33 գ- յուղնախարարությունը ցեղիսները կիրառի թթու ռեակցիա ունեցող հողերում, որպեսզի չեզոքացնի դրանք թթու ռեակ- ցիան: Չէ՛ որ նախկինում թթու ռեակցիա ունեցող հողերում դրանք թթվայնության չեզոքացման նպատակով կիրառվում էին դոլոմիտները (դոլոմիտային փոշիները):

Դարձելի՛ ընթերցողներ, Ինձ հասցեագրված նամակի վերջին նախադասության վերջին բառերը. «... որը շատ ա- վելի բարձր է, քան խնայվող ջրի ծախսը», ինձ հուշում են այն մասին, որ նամակագիրները չեն հասկացել կամ չեն ցանկացել հասկանալ իմ առաջարկության կարևորագույն էությունը՝ մեր բնակչության առողջության պահպանման, է- կոլոգիապես մաքուր գյուղընթերցներ բնակչությանը մատա- կարարելու առումով: Տեղյա՛կ են արդյոք նամակագիրնե- րը, թե ինչ հետևանքներ են առաջացնում ծանր մետաղ- ները, թունավոր ու ռադիոակտիվ տարրերը մարդու օրգա- նիզմում: Եթե տեղյակ լինեին, եթե հասկանային մեր առա- ջարկության անենակարևոր իմաստը, «ջրի ծախսի» մասին չէին հիշատակի:

Ավարտելով սույն հոդվածը, կցանկանալի նշել հետևյա- լը. շատ ցավալի է, որ՝ 33 լեռնահանքային արդյունաբե- րության զարգացմանն ու արդյունավետության բարձրաց- մանը, չըջակա միջավայրի մաքրության պահպանմանը, գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը, քաղցրահամ ջրերի տնտեսմանն ու արդյունավետ օգտա- գործմանը, 33 բնակչությանը բնապահպանական առումով մաքուր սննդամթերքների (գյուղմթերքների) մատակարար- մանը, բնակչության առողջական վիճակի բարելավմանն ուղղված մեր առաջարկությունները 33 նախարարություն- ների կողմից ընդունվում են սվիններով, արվում է ամեն ինչ՝ դրանց ներդրումն արգելակելու և ծախսողելու ընդհանրա- պես: Այդ մասին է վկայում 2010-2011թթ. 33 կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմի- տեի կողմից մեր երկու ծրագիր-առաջարկությունների ու 33 գյուղնախարարության կողմից բնական ցեղիսների կի- րառության միտումնավոր ծախսումը:

Նման վերաբերմունքի պայմաններում 3այաստանում ինչպես արդյունաբերություն, այնպես էլ գյուղատնտեսու- թյուն զարգանալ չի կարող: Եվ օրափնդիր է շտապ վերափո- խել կառավարության և պաշտոնյաների մտածելակերպն ու վերաբերմունքը մեր տնտեսության հանդեպ:

Պարույր Մամբրեի ՄՈՒՐԱԴՅԱՆ

3այագիտությունը ծանր կո- րուստ կրեց:

Երկարատև հիվանդությու- նից հետո կյանքի 79-րդ տարում վախճանվեց ականավոր հայա- գետ-աղբյուրագետ, կովկասա- գետ, 33 ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գլխավոր մասնա- գետ, պատմական գիտություն- ների դոկտոր, պրոֆեսոր Պա- րույր Մամբրեի Մուրադյանը:

Պ. Մուրադյանը ծնվել է 1933թ. մարտի 25-ին Ջավախքի Ղադո /հայ. Փապար/ գյուղում: 1963 թ. պաշտպանել է թեկնածուական առե- նախոսություն «3այ-վրացական մատենագրական փոխհարաբերությունները 18-րդ դարում» թեմայով: 1963-1970 թթ. աշխատել է Մ. Աբեղյանի անվան գրակա- նության ինստիտուտի հին գրականության բաժնում: 1970 թ. աշխատել է Երևանի պետական համալսարա- նի պատմության ֆակուլտետում, իսկ 1976 թվականից նաև 33 ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում, որտեղ կազմավորել և գլխավորել է Կովկասագիտության և բյուզանդագիտության բաժինը: 1986 թ. պաշտպանել է դոկտորական առենախոսություն «Վրաստանի հայե- րեն արձանագրությունները. Ջարթլի և Կախեթ» թեմա- յով: 1989 թ. ստացել է պրոֆեսորի կոչում, դարձել է Մես- րոպ Մաշտոցի մրցանակի դափնեկիր: 1991/92 ուսում- նական տարում Կովկասագիտության դասընթաց է վա- րել Գերմանիայում /Տրիեր համալսարան/:

Նշանակալի է պրոֆ. Պարույր Մուրադյանի վաստա- կը հայոց միջնադարյան մատենագրության, մշակույթի, ճարտարապետության, պատմական սկզբնաղբյուրնե- րի ու վիմագրական հուշարձանների հիմնարար հետա- զոտությունների բնագավառում:

3այագիտության համար խոշոր երևույթ էր Պ. Մու- րադյանի կողմից «Վրաց ժամանակագրություն»-ը հին վրացերենից հայերենի ամբողջական թարգմանու- լունն ու հրատարակումը:

Մնայուն և գիտական մեծարժեք հետազոտություն- ներ են «Armeno-Georgica» մատենաշարով հրապա- րակված Պ. Մուրադյանի մենագրությունները՝ 3այաս- տանի վրացերեն արձանագրությունները, Վրաստանի հայերեն արձանագրությունները /2 հատոր/, Ագաթան- գեղոսի հին վրացերեն խմբագրությունները, Շուշանի- կի վկայաբանության հայերեն և վրացերեն խմբագ- րությունները:

Պ. Մուրադյանը թողել է գիտական հսկայական ժա- ճանգություն՝ ավելի քան 300 տպագիր աշխատություն: Նրա ուսումնասիրություններին հատուկ է գիտական հիմնավորվածությունը, առաջադրվող եզրակացու- լյունների թարմությունն ու համարձակությունը, գիտա- կան նորոյթը: Պրոֆ. Պ. Մուրադյանի գիտական գոր- ծունեությանը բնութագրական է գիտական հետևողա- կանությունը և ուսումնասիրության խնդիրների լայն շրջանակի ընդգրկումը:

Նա կազմել ու խմբագրել է «Կովկաս և Բյուզան- դիա», «3այագիտական հետազոտություններ», «3ա- յագիտական մատենագրություն», «3ուշարձան» մատե- նաշարերը, խմբագրել է շատ հայագետների մենագ- րություններ, կազմել և հրատարակել է անվանի հայա- գետների գիտական ժառանգությունը ամփոփող ժողո- վածուներ /Ն. Մառ, 3. Օրբելի, Լ. Խաչիկյան, Լ. Մելիքսեթ- Բեկ, Երվանդ Տեր-Մինասյան, Մկրտիչ Ներսիսյան և այլք/:

Պրոֆ. Պ. Մուրադյանը եղել է գիտական, գիտամե- թոդական ու խմբագրական մի շարք խորհուրդների ան- դամ: Գիտական գեկուցումներով մասնակցել է բազմա- քիվ միջազգային գիտաժողովների ու կոնգրեսների ինչ- պես 3այաստանում, այնպես էլ արտասահմանյան շատ երկրներում, 3այաստանում կազմակերպել է «Քրիս- տոնյա Արևելք» միջազգային գիտաժողովը և հրատա- րակել նրա նյութերը:

Պ. Մուրադյանը բազմիցս արժագանցել է նաև պատ- մության կեղծարարություններին և պարբերական մա- մուլի ու գիտական հանդեսների էջերում բազմիցս հան- դես է եկել սուր գրախոսություններով:

Պատմական գիտությունների դոկտոր, Մեսրոպ Մաշ- տոցի անվան մրցանակի դափնեկիր պրոֆ. Պարույր Մամբրեի Մուրադյանը պատմա-բանասիրական լայն ընդգրկում ունեցող գիտնական էր, որը խոր հետք է թո- դել 3այաստանում Կովկասագիտության ձևավորման ու զարգացման բնագավառում:

Նա դեռևս շատ անելիքներ և մեծ ծրագրեր ուներ ի- րականացնելու:

Պարույր Մուրադյանի՝ անխոնջ գիտնականի և բա- րի մարդու հիշատակը թանկ ու անմոռաց է հայագետնե- րի, բազմաքիվ գործընկերների, աշակերտների, ինչպես նաև 3այաստանի ողջ մտավորականության համար:

33 ԳԱԱ նախագահություն
33 ԳԱԱ 3այագիտության և հասարակական
գիտությունների բաժանմունք
33 ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ
ԵՊՀ պարմության ֆակուլտետ

Հրաչյա ԱՎԱԳՅԱՆ
Երկրաբանահանքաբանական
գիտությունների դոկտոր

ԱՄԵՐԻԿԱԿԱՅ ԲՆԱԳԵՏ...

4 պատում, մինչև որ մոլորյալ ձիեր փնտրող մարդիկ գտել են նրան, խնամել և շաբաթներ անց ուշքի բերել: Այսպիսով, Ձոն Վարդանը երկրորդ անգամ է հրաշքով փրկվել ստույգ մահից:

Այնուհետև նա անցել է Կոլորադո նահանգի Դենվեր քաղաք և աշխատանքի անցել սոցիալական, սակայն այդտեղ էլ սոցիի տակ կորցրել է ձեռքի չորս մատները:

Կյանքի մատուցած անակնկալ ծախսություններն ու դժբախտությունները չեն ընկնել անհավանական արկածների ընդառաջ գնացող հայազգի Ձոն Վարդանին և նա, երկու սալ գնելով, վերադարձել է Գրանդ Քանյոն կղզված կիրճը՝ շարունակելու հանքաքանական իր պրպտումները:

Հետաքրքրաշարժ, բայց և վտանգաշատ կյանք ունեցող գիտնականի գործունեության վերաբերյալ ժամանակի ամերիկյան թերթերը գրել են. «Ամերիկայի մեջ հիմա ոչ ոք ճօն Վարդանի անունը արդեն չգիտի: Նահանգացի այն մասերում երկրաբանությունը, հանքաբանությունը, բուսաբանությունը, կենդանաբանությունը և բնութան բոլոր հրաշալիքները: Տասն և վեց տարի է Վեր, [նա] հազուադեպ հալածվում էր կազմած է անծանօթ հանքային նիւթերու՝ անկոխ քարայրներու խորքն հանուած, քանկազին քարերու, անգիտ նախապատմական բուսեղեններու, եւ: Ամեն տարի 4-5 ամիս կը գոհէ Քանյոնի մեծ հովտին խորքը նկարագրելու»:

Ամեն անգամ բազմաթիվ գտածո մոլորներով իր երկու սալերը լցրած վերադառնալով՝ Ձոն Վարդանը ամերիկացի գրողներին համոզել է ելել գիտական դասախոսություններով ու ցուցադրություններով: Ժամանակի թերթերի վկայությամբ այդ ամենը նա իրականացրել է ի սեր գիտության, առանց որևէ շահադիտական նկատառումների:

Ինչպես «Բիւզանդիոնը», նույնպես և Իզմիրում լույս տեսնող «Դաշինք» քաղաքական-գրական օրաթերթը պատկերավոր նկարագրել են Ձոն Վարդանի արտաքին տեսքն ու նրա ներքին էությունը. «[Նա] Ռօպէնսօն Քրիզօֆի երեւոյթն ունի: Մազերը մեծ մասամբ ճերմկացած են: Խոշոր մօրուք մը թողած է, գլխարկ, օձիք, փողկապ, անանկ բաներ չի ճանչնար, հագուստներն ինք կարած եւ կարկտած է, բայց ուշիմ դէմք մ'ունի, լայն ճակատ, եւ վերջին ծայր բարեկիրթ, բարեհամբոյր մարդ մ'է: Հայերէնը մոռցած է բոլորովին: Անգլիերէն լեզուով իր գիտական բանախօսութիւններն յոյժ շահեկան են, եւ գեղեցիկ առողջաբանութեամբ մը կ'արտասանէ: Կ'ըսէ թէ. «Ես բնութեան մէկ զաւակն եմ: Չափէն աւելի



քաղաքակրթութիւն ենք: Ես ահա դէպ ի բնութիւն կ'վերադառնամ»: Բնութեան սիրահար մ'է, եւ արդարեւ Քոլորադոյի մեծ գետահովիտն իրեն յատուկ աննկարագրելի գեղեցկութիւնով դիւրեր, հմայել է այս տարօրինակ մարդը»:

«Կես դար ետքը. Նոր աշխարհէն վերադարձող մը. Տարօրինակ Հայ մը. Իզմիր կը հասնի Երեքշաբթի» վերտառությամբ հոդվածում «Դաշինք» օրաթերթը 1911 թ. հունվարյան համարներից մեկում հաղորդել է, որ Ձոն Վարդանն այդ օրերին ԱՄՆ-ից ժամանել է Իզմիր: Նույն թերթը տեղեկություններ է հաղորդում նաև բնօրրանում թողած նրա հաղաթանքի մասին. եղբայրը ջութակահար Հարություն Գարայանն էր, իսկ քույրը՝ ողբերգական վախճան ունեցած նշանավոր դերասանուհի Մարի Նվարդը: Հարազատները երկար ժամանակ Հովհաննեսին անհետ կորած են համարել, սակայն, «Բիւզանդիոնի» 1906 թ. օգոստոսի 16-ի համարում կարդալով ամերիկյան թերթերից նրա մասին արտատպված տեղեկությունը, բազմաթիվ հարցուփորձերից հետո կարողացել են գտնել նրան և հրավիրել Իզմիր՝ այցի: 1908 թ. Ձոն Վարդանն այցելել է նաև Պոլսում բնակվող իր քրոջը Տիրուհի-Շուշանիկին:

Այսպիսին էր ամերիկահայ Ձոն Վարդանի հետաքրքրաշարժ կյանքը, որը լիովին և ինքնամոռաց կերպով նվիրել էր հանուն և ի շահ բնագիտության: Հետագայում շատերը շարունակեցին նրա սկսած գործը, սակայն գիտության սիրույն վտանգաշատ արկածներին ընդառաջ գնացող Ձոն Վարդանի յուրահատուկ կերպարը, եռանդն ու գրկանքներով լի կյանքը բացառիկ օրինակ էին ինչպես հայ, նույնպես և օտար հետազոտողների համար:

ՋԵՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ԽԱՍՈՅԱՆ ՄԱՔՍԻՄ ՀՈՒՍԵՅՆԻ

Իր մահկանացուն կնքեց ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի քրդական հետազոտությունների խմբի ղեկավար, դոկտոր, պրոֆեսոր Մաքսիմ Խամոյանը:



Մաքսիմ Խամոյանը ծնվել է 1934 թ. Ապարանի շրջանի (ներկայումս՝ Արագածոտնի մարզ) Ավշեն գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի տարրական դպրոցում, միջնակարգ կրթությունը՝ Ապարանի շրջանի Շաղկահովիտի միջնակարգ դպրոցում:

Երևանի պետական համալսարանի ռումանո-գերմանական ֆակուլտետում ավարտելուց հետո Մաքսիմ Խամոյանը ընդունվում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Ասիայի ժողովուրդների ինստիտուտի Լենինգրադի բաժանմունք: Սահմանված ասպիրանտուրական բնությունները փայլուն հանձնելուց հետո Մաքսիմ Խամոյանը 1964 թ. վերադառնում է Հայաստան և աշխատանքի անցնում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի քրդագիտության բաժնում՝ որպես կրտսեր գիտական աշխատող:

1966 թ. Մաքսիմ Խամոյանը փայլուն կերպով պաշտպանում է իր թեկնածուական դիսերտացիան՝ «Քրդերեն լեզվի բաղադրանքի բարբառը», իսկ դոկտորական դիսերտացիան՝ «Քրդերեն լեզվի դարձվածաբանության հիմունքներ» վերնագրով՝ 1990 թ. Մոսկվայում:

Գիտական աշխատանքին զուգահեռ 1968 թ. Մաքսիմ Խամոյանը համատեղության կարգով Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում դասավանդել է քրդերեն լեզու:

1994-2000 թթ. համատեղությամբ աշխատել է Երևանի «Դավիթ Անհաղթ» հումանիտար համալսարանում՝ որպես քրդագիտության ֆակուլտետի ղեկավար և քրդերեն լեզվի դասախոս:

2002-2004 թթ. համատեղությամբ Հրաչյա Աճառյան համալսարանի արևելագիտության ֆակուլտետում դասախոսել է «Արևելյան լեզուների տեսության հիմունքներ» կուրսը:

2008 թ. սկսած՝ «Քրդագիտության ներածություն» կուրս է դասավանդել ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրայում:

1995-2009 թթ.՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի անդամ և այդ ինստիտուտին կից թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների մասնագիտական խորհրդի անդամ:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մաքսիմ Խամոյանը խոր հետք է թողել գիտության այն ճյուղի ծնավորման և զարգացման բնագավառում, որին նա անմնացորդ նվիրեց իր ամբողջ գիտակցական կյանքը:

Պրոֆեսոր Մաքսիմ Խամոյանի գիտական թողունը պարունակում է 70 գիտական հոդվածներ, 7 արժեքավոր մենագրություններ, գրախոսություններ, որոնք կծառայեն որպես ուղենիշ ապագա քրդագետների համար:

Անվանի գիտնականի, վաստակաշատ մանկավարժի հիշատակը վառ կմնա նրան ծանալողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

ԲԶՋԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԸ ԿԱՐՈՂ Է ԲԱՂՅԱԵՂ ՀԱՐՈՒՅԵԼ

Բջջային հեռախոսների էլեկտրամագնիսական դաշտերը կարող են առաջացնել քաղցկեղային հիվանդություններ ու վտանգավոր են մարդու առողջության համար: Այդ մասին Լիոնում լիագումար նիստի ավարտից հետո հայտարարել են Քաղցկեղի հետազոտման միջազգային գործակալության փորձագետները:

Սեկուլեն տասնյակ երկրների գիտնականներին միավորող փորձագիտական հանձնաժողովի ներկայացուցիչ Ջոնաթան Սամեթի խոսքերով. «...առ այսօր հավաքված են բավական շատ ապացույցներ, որոնք թույլ են տալիս բջջային հեռախոսները մտցնել մարդու առողջության համար վտանգավոր քաղցկեղային սարքերի ցանկում»:

«Համաճարակաբանական տարբեր հետազոտություններից պարզվել է, որ բջջային հեռախոսները մեծացնում են գլխուղեղի ուռուցքների՝ գլիոմաների զարգացման վտանգը»,- շարունակում է

Սամեթը. որի խոսքերը մեջբերում է ԻՏՈՒ-ՏԱՍՍ-ը:

Գործակալության փորձագետների գնահատմամբ, բջջային հեռախոսները դասվում են «հաճախ քաղցկեղային նյութերի ու գործոնների» շարքին:

Գործակալությունը ստեղծվել է 1965-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպության հովանու ներքո:

Մասնագետներն ընդգծում են, որ իրենք չեն հորդորում հրաժարվել բջջային կապից, պարզապես չպետք է չարաշահել բջջային հեռախոսները:



Կոֆեինը խոչընդոտում է հղիանալը

Նևադայի համալսարանում (ԱՄՆ) պրոֆեսոր Շոն Ուորդի ղեկավարությամբ անցկացված հետազոտությունը ցույց է տալիս, որ այն կանայք, ովքեր ուզում են հղիանալ, պետք է խուսափեն սուրճ և կոֆեին պարունակող մյուս ըմպելիքների օգտագործումից: Վերջին տվյալների համաձայն՝ աշխարհում առավել տարածված խթանիչներից մեկը կոֆեինը, կարող է ազդել արգասավորության վրա, նշում է The Independent թերթը:

9000 կանանց հետազոտությունը ցույց է տվել, որ օրական 4 գավաթից ավելի սուրճ խմելը մոտ 1/4-ով կրճատում է հղիանալու հնարավորությունը: Պատճառն այն է, որ կոֆեինը նվազեցնում է մկանների ակտիվությունը արգանդափողերում, որոնցով ձվաբջիջը քափանցում է արգանդ, որտեղ էլ կատարվում է բեղմնավորումը:

Թե ձվաբջիջներին ինչպես է հաջողվում տեղաշարժվել, այնքան էլ լավ հայտնի չէ: Ենթադրվում է, որ այդ հարցում դրանց օգնում են մազանման փոքր ելունները՝ թարթիչները, ֆալլոպյան փողերի մկանային կծկումների միջոցով: Մինչդեռ կոֆեինը չեզոքացնում է այդ կծկումները խթանող հատուկ բջիջների գործողությունը, ինչի հետևանքով ձվաբջիջը կորցնում է տեղաշարժվելու կարողությունը:

Պենտագոնը համակարգչային գրոհը կհամարի ռազմական գործողություն

ԱՄՆ-ի դեմ համակարգչային գրոհի ձեռնարկումը կարող է համարվել իրական ռազմական գործողություն: Ի պատասխան Պենտագոնն իրավունք կունենա հարվածելու կիբեռգրոհի կազմակերպած երկրին: Սրանք են համակարգչային անվտանգության առաջին պաշտոնական ռազմավարության դրույթները, որոնցից քաղվածքներ կիրառվեն արդեն հունիսին:

Պենտագոնում պատրաստված է 30-էջանոց գեկուցագիր, որի գաղտնագրված տարբերակն ունի ընդամենը 12 էջ: Փաստաթղթին ծանոթացած զինվորականները եզրակացնում են. պատերազմի վարման ավանդական օրենքները կիրառելի են նաև կիբեռնետիկայում:

Մասնագետները խոստովանում են համակարգչահեռանային գրոհների մեծ վտանգը առումային ռեակտորների, մետրոպոլիտների և խողովակաշարերի կառավարման ցանցերի համար, նշում է «Ուոլ սթրիթ Ջոուրնլ» թերթը:

ԱՄՆ-ում կարծում են, որ հուժկու կիբեռգրոհներն անհնար են առանց տվյալ երկրի կառավարական ծառայությունների օգնության: Պենտագոնի ներկայացուցիչները պաշտոնապես չեն քննարկում հավանական կիբեռագրետորների հարցը, բայց Պենտագոնում և ԿՀՎ-ում խոստովանում են, որ ԱՄՆ-ի դեմ էլեկտրոնային հարձակումներ կարող են իրականացնել Ռուսաստանը և Հինաստանը: Ասում են, թե ՀՀ-ի բանակում կան վիրտուալ ճակատի մարտիկներ:

Կիբեռգրոհների դեմ պայքարի լավագույն եղանակը համարվում է կիբեռգնեք պատրաստող երկրներին պատասխանատվության կանչել: Սակայն ԱՄՆ-ում չի բացառվում նաև վիրտուալ գրոհներին ի պատասխան իրական հարվածներ հասցնելու հնարավորությունը:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Սկորագրված է պապագրության՝ 28. 07. 2011 թ.:

"ԴԻՄՏԻՈՒՄ" ("Найка") газета НАН РА